ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ[1]

Արա Մարջանյան[*]

Մենք ապրում ենք փակագծային ժամանակներում՝ երկու դարաշրջանների միջև, կարծես թե, զատել ենք մեր *ներկան* թե՛ *անցյալից*, թե՛ *ապագայից*, քանզի ոչ այստեղ ենք, ոչ այնտեղ: Մենք անցյալը դեռ վերջնականորեն չենք լքել, բայց դեռ չենք ողջագուրվել ապագայի հետ: Ըստ էության, մենք մի շատ մարդկային բան ենք արել. կառչել ենք ծանոթ անցյալին՝ երկյուղելով անիմանալի ապագայից:

Ջոն Նայսբիթ, **Մեգաթրենդներ, 1982թ.**[2]

Ներածություն

Ջոն Նայսբիթը այս տողերը գրում էր դեռ այն ժամանակ, երբ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ.Բրեժնևը մահամերձ էր, իսկ ԽՍՀՄ-ը զորեղ, բայց արդեն մահացու հիվանդ տերություն էր, Երկիր մոլորակի երկու աշխարհաքաղաքական բևեռներից մեկը: Սակայն այս ամենը Նայսբիթին առանձնապես չէր մտահոգում, քանի որ ապագան ձևավորող հիմնական միտումների մասին իր այս գիրքը գրելիս նա հենվում էր հիմնականում ամերիկյան իրողությունների վրա: ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի առողջականը բոլորովին էլ նրա ուշադրության կիզակետում չէր: Բայց, ինչպես դա պատահում է իրապես հանճարեղ գրքերի հետ, ժամանակը գրքից իմաստուն գտնվեց՝ գուցե նույնիսկ հեղինակի կամքից անկախ հաղորդելով նրան իմաստի նոր երանգներ:

[1] Սույն հոդվածը պատրաստված է 2010թ. «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից կազմակերպված «Ազգային անվտանգության հիմնախնդիրները» խորագրով Նորավանքյան ամառային դպրոցի շրջանակներում հեղինակի հուլիսի 13-ի համանուն զեկույցի հիման վրա:

[*] ՄԱԿ ԶԾ էներգետիկայի գծով ազգային փորձագետ, Համաշխարհային բանկի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող Հայաստանում, տ.գ.թ.:

[2] Տե՛ս [17, c. 351]: Թարգմանությունը մերն է – *Ա.Մ.*

Եվ իրոք, 1982-ը դարձավ այն բացող «փակագիծը», որն ազդարարեց աշխարհաքաղաքական գլոբալ փոփոխությունների ժամանակաշրջանի սկիզբը: Ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում, միայն մեկ սերնդի աչքի առջև ավարտվեց երկբևեռ աշխարհակարգը, և գրեթե հավերժ կանգուն թվացող վերազգային պետություններն ու կազմավորումներն ակնթարթորեն փլուզվեցին, կարծես ավազե դղյակներ՝ հորդառատ անձրևի պոռթկումների տակ: Դրանց փլատակների վրա գոյացան նորանկախ պետություններ, և ամենատարբեր պատմական ու քաղաքակրթական ժառանգություն ունեցող ժողովուրդների ազգային գիտակցությունը յուրօրինակ զարթոնք ապրեց՝ խրախուսելով ոմանց մոտ՝ ազգային ինքնության փնտրտուքը, ոմանց մոտ՝ ազգային անվտանգության մասին մտորումները:

Մյուս կողմից, այսպես կոչված «գլոբալացման» և աշխարհաքաղաքական մի շարք գործոնների զորեղ ճնշման ներքո խարխլվում են հենց իրենք՝ ազգ-պետությունները, արդի քաղաքական համակարգի հիմնաքարերը: Դասական դարձած «ազգային տնտեսություն», «ազգային անվտանգություն» և հարակից այլ հասկացություններ դառնում են մշուշոտ ու «ոչ մոդայիկ»:

Ահա այն բևեռները, որոնց միջակայքում ծավալվում են անկախության, ազգային գիտակցության և անվտանգության շուրջ մեր մտորումները՝ անխուսափելիորեն դիալեկտիկ և ոչ ամբողջական: Ընդգծելու համար, թե իրականում ինչքան բազմաբովանդակ է այս տիրույթը, ինչ անակնկալ պատճառահետևանքային կապեր են գործում այստեղ, գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների դարաշրջանում մեր ազգային անվտանգության որոշ հիմնախնդիրներին նվիրված մեր դիտարկումները կկատարենք ոչ ավանդական ձևով: Մասնավորապես, սույն հոդվածում չենք անդրադառնա մեր ազգային անվտանգության այնպիսի հրատապ, կենսական կարևորության հարցերի, ինչպիսիք են ժողովրդագրական իրավիճակը Հայաստանում և տարածաշրջանում, սահմանամերձ բնակավայրերի ու համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը կամ ինովացիոն տնտեսության ստեղծումը (այս խնդիրները լուսաբանվել և լուսաբանվում են «Նորավանք» ԳԿՀ հրատարակումներում):

Փոխարենը, կփորձենք կենտրոնանալ ավելի քիչ լուսաբանվող հարցերի վրա՝ դիտարկելով դրանք ավելի լայն համատեքստում, քան դա սովորաբար ընդունված է: Ըստ էության, մեր հոդվածը հյուսվում է միայն մեկ հարցի շուրջ. ինչպիսի՞ն է իրականությունը: Հարցն ընկած է ոչ միայն փիլիսոփայության և իմացաբանության հիմքում, այլև կազմում է աշխարհաքաղաքականության հենքը: Չէ՞ որ այս հարցի համարժեք պատասխաններն են, որ պայմանավորում են ազգային անվտանգության համակարգի կենսունակությունը: Այս իմաստով հոդվածս կարող էր անվանվել նաև.

Ազգային անվտանգությունը և իրականության ըմբռնումը

Մեր դիտարկումը սկսենք իրականության ամենախորունկ հատկանիշից՝ ինքն իրեն հավասար չլինելու հանգամանքից:

Գրեթե յուրաքանչյուրս գիտենք, որ գալիս է պահը, երբ զարմանքով հայտնաբերում ենք, որ այստեղ ու հիմա մեր գոյությունն իմաստավորվում է այն դեպքում միայն, եթե մենք մեզ զգում ենք մեզնից շատ ավելի մեծ ու վսեմ մի բանի մասնիկ: Երբ գիտակցում ենք, որ հավասար չենք ինքներս մեզ: Նույնը կարելի է և պետք է ասել ազգային անվտանգությունը կերտող ազգային գիտակցության և ազգային հիմնախնդիրների մասին: Իրականությանը համարժեք լինելու համար դրանք, նախ, չպետք է լինեն պարփակ ու տավտալոգիկ, չպետք է լինեն «ինքներն իրենց հավասար»: Ազգային անվտանգության համակարգը պետք է հիմնվի մեր ազգային շահերի վրա. սա անվիճելի է: Սակայն կենսունակ և արդյունավետ լինելու համար այն նաև պետք է լինի բաց աշխարհին, ներդաշնակի համամարդկային արժեհամակարգին, արձագանքի մարդու և մարդկության իղձերին և խնդիրներին: Պարփակի մարդկությունն իր ափերի մեջ՝ կասեր Պ.Սևակը: Լինի ավելին, քան է:

Համարձակվենք պնդել, որ «բացությունը աշխարհին» բնորոշ է մեզ՝ հայերիս, թերևս ավելին, քան որևէ այլ քաղաքակիրթ ազգի: Իբրև ասվածի վկայություն բերեմ Իմանուիլ Կանտի՝ մարդկության այս մեծագույն ուսուցչի հետևյալ միտքը. «Հայերի՝ այս քրիստոնյա ազգի մեջ տիրում է առևտրային մի ուրույն հոգի, որը նրանց ոտքով կարողանում է հասցնել Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափ՝ Կորսո հրվանդանը. սա խելացի ու աշխատասեր այս ազգի առանձնահատուկ գոյացման մի վկայություն է: Ազգի, որը կտրելով ողջ Հին աշխարհը՝ հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք, կարողանում է գտնել բարեհամբույր վերաբերմունք այն բոլոր բազում ժողովուրդների մոտ, որոնց միջով անցնում է: Սա [հայերի] գերազանց ազգային բնավորության ապացույցն է, որի ձևավորման ակունքները մենք արդեն ի վիճակի չենք քննել» (տե՛ս [1], c. 572-573, թարգմանությունը մերն է – *Ա.Մ.*):

ԽՍՀՄ փլուզումից և երկբևեռ աշխարհակարգի վերացումից հետո մեր ազգային ինքնագիտակցությունը կառուցել «Հայոց աշխարհի» ցանցային հենքի վրա, ինչ խոսք, արդիական է, մոդայիկ և թելադրված է առաջացած գաղափարախոսական վակուումը լրացնելու ցանկությամբ: Սակայն, կարծում եմ, մեր ինքնագիտակցության իրական հենքը ազատությունն է, *մեր* տարածաշրջանում, *մեր* տանը, *մեր* ինքնորոշման կամքի դրսևորումը: Իսկ սա, որքան էլ տարօրինակ թվա, «Հայոց աշխարհի» գաղափարախոսության համեմատ շատ ավելի ընդգրկուն հենք է աշխարհին անվրդով աչքերով նայելու, դրան բաց լինելու համար: Քանի որ միայն այս դեպքում է մեր ժողովրդի կամքի ինքնաբուխ պոռթկումն ու ազգային գիտակցությունն անմիջականորեն կապվում

բոլոր քաղաքակիրթ ազգերի, բոլոր ժողովուրդների և յուրաքանչյուր առողջ անհատի ամենահիմնական ու անօտարելի մղմանը՝ ազատության տենչին:

Սա լեզու է, որը հասկանալի է բոլորին, սա մղում է, որը կարող է ձեզ «Չինաստանի սահմաններից հասցնել Կորսո հրվանդան»: Դրան ընդունակ է միայն ազատամիտ և ազատասեր մարդը: Եվ զուր չէ, որ Դ.Դեմիրճյանը հայի իր հայտնի նկարագիրը սկսում է առնտրական ու «չարչիից», բայց ավարտում է հատկանշական հետևյալ բառերով. «Եթե դուք սիրում եք կյանքը՝ ես [հայս] սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը - Ազատությունը» (տե՛ս [2]): Մնում է միայն համարժեք կերպով արտացոլել այս մղումը մեր ազգային անվտանգության, մեր ներքին և արտաքին քաղաքականության համակարգերում:

Մինչդեռ, առաջին հայացքից կենսունակ և արդիական թվացող «Հայոց աշխարհի» ցանցային գաղափարախոսությունը, պատկանելով այսպես կոչված «գաղտնի կազմակերպությունների» գաղափարների ընտանիքին, իրականում սահմանափակ է, մեկուսացնող, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ անգամ փոքր-ինչ վտանգավոր: Ազգը չի կարող լինել ցանց, «ընտրյալների հանրույթ» կամ մեկուսի «գաղտնի կազմակերպություն». նայեք միայն հրեա ժողովրդի ողբերգական պատմությանը:

Ի վերջո, և սա կվկայի դինամիկ համակարգերի կայունությամբ զբաղվող յուրաքանչյուր բանիմաց մասնագետ, գլոբալ փոփոխությունների ժամանակաշրջանում անկայունությունների և անորոշությունների շրջանի փորձություններին դիմանում են միայն այսպես կոչված «կոպիտ», «*ռոբաստ*» (ակադեմիկոս Ա.Անդրոնովի տերմինաբանությամբ) կամ «*կառուցվածքային կայուն*» (Ռ.Թոմի տերմինաբանությամբ) համակարգերը: Մարդկային հասարակությունում այդպիսին են այն համակարգերը, որոնք հենվում են ազատության և անկախության գաղափարների վրա: Քանզի այդպիսին է ժամանակի դատը:

Մեր հիվանդ ժամանակները

Անհատի մակարդակով՝ առողջ ինքնագիտակցություն, իսկ ազգի մակարդակով՝ առողջ ազգային անվտանգության համակարգ ունենալու համար չափազանց կարևոր է հասկանալ, թե ինչպիսին է իրականությունը: Մասնավորապես, պատկերացնել, թե որքա՞ն հիվանդ են մեր ժամանակները: Ինչով, ինչպես և որքան է աղտոտված մարդկային արդի հասարակությունը: Այս հարցում մեզ չի օգնի օրեցօր ահագնացող այն բառակույտը, որն այս առիթով շաղ են տալիս նորօրյա «մարգարեներն» ու վարձկան մտավորականները: Այստեղ հարկ է անդրադառնալ մարդկության սակավաթիվ ասպետ մտածողներին, մարդկության իրական դայակներին, ախտորոշող բժիշկներին:

Օրինակ՝ անցած դարի մեծագույն մտածող և գիտնական, էտոլոգիայի[1] հիմնադիր, 1973թ. ֆիզիոլոգիայի և բժշկության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր, գորշ սագերի հավատարիմ ընկեր Կոնրադ Լորենցի (*Konrad Lorenz,* 1903-1989) մտորումներին: Առավել ևս, որ դրանց համար հիմք է ծառայել նրա կյանքի փորձը, մասնավորապես՝ ձեռք բերված 1944-47թթ. Երևանից ոչ հեռու գտնվող ռազմագերիների համակենտրոնացման ճամբարում, և ի մի բերված 1973թ. հրատարակված «Քաղաքակիրթ մարդկության ութ մահացու մեղքերը» գրքույկում [3]: «Եթե բժշկի և էտոլոգի անաչառ աչքերով նայենք մեր քաղաքակրթության ներկայիս անկմանը, ապա հստակորեն կնշմարենք բացահայտորեն պաթոլոգիկ (հիվանդագին) մի շարք խանգարումներ»,- գրում էր Լորենցը՝ մատնանշելով այդպիսի ութ խանգարում.

1. գերբնակեցում - ժողովրդագրական ճնշում,
2. կենսոլորտի ամայացում,
3. մրցավազք ինքներս մեզ հետ,
4. զգացմունքների «ջերմային» մահ,
5. գենետիկ այլասեռում,
6. խզումն ավանդույթների հետ,
7. Ինդոկտրինացիա (որոշակի գաղափարի (քաղաքական, կրոնական և այլ) նպատակաուղղված տարածում կամ յուրացում),
8. միջուկային սպառազինություն:

Լորենցի իրական մեծությունը քաղաքակիրթ մարդկության այս «մեղքերի» ցանկի պարզունակ կազմումը չէ ամենևին: Դրանցից շատերը մատնանշվել էին ավելի վաղ և այլոց կողմից, իսկ Լորենցի այս ցանկին ներկայումս կարելի է ավելացնել մի երկու նոր «մահացու մեղք»[2]: Լորենց-գիտնականի մեծագույն նվաճումն այն էր, որ նա կարողացավ ցույց տալ այս «մեղքերի» գոյացման անքակտելի, ներքին կապը կենդանական աշխարհում գործող էվոլյուցիոն մեխանիզմի հետ՝ առաջին անգամ ցայտուն ընդգծելով այն խոր նմանությունը, որը գոյություն ունի մարդու և կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների վարքի միջև՝ զուտ մարդկային համարվող երևույթների առումով: Օրինակ, ներտեսակային ագրեսիան զսպելու ընթացքում անհատական ընկերության, «եղբայրասիրաց» միությունների և ծեսերի գոյացումը, որսի սեփական տարածքի պահպանման ընթացքում ավանդույթների ձևավորումը, այլատյացության օգտագործումը որոշակի տիպի հանրությունների կայունությունը պահպանելու համար և այլն:

Այս «մահացու մեղքերից» յուրաքանչյուրն ինքնին արժանի է հանգամանալի քննարկման, հատկապես ազգային անվտանգության խնդիրների հետ

[1] Գիտություն մարդու և կենդանիների վարքի մասին:

[2] Նշենք Օ.Շպենգլերին, Զ.Ֆրոյդին, Յ.Հոյզինգային: Նոր՝ XXI դարը վերաբացահայտեց «ահաբեկչություն» մահացու մեղքը:

իրենց կապի առումով: Ցավոք, բոլորին անդրադառնալ հոդվածի սահմաններում չենք կարող: Բայց գոնե թռուցիկ կանգ կառնենք «մրցավազք ինքներս մեզ հետ» և «ինդոկտրինացիա» մեղքերի վրա՝ հավելելով միայն, որ դրանք սերտորեն կապված են ևս երկու՝ «զգացմունքների «ջերմային» մահ» և «ավանդույթների հետ խզումը» «մեղքերի» հետ:

Մրցավազք ինքներս մեզ հետ

Մարդկային (ու կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների) հանրությունների կայունությունը մեծապես պայմանավորված է բնական ընտրության հիմնարար ուժերի (գոյատևման ու սեռական վերարտադրման համար պայքար) անընդմեջ ու երկարատև աշխատանքով: Այս ուժերն ունեն այսպես կոչված *բացասական հետադարձ կապերի* բնույթ: Դրանց աշխատանքի դասական օրինակ է գիշատիչների և զոհերի պոպուլյացիոն հավասարակշռության երևույթը:

Այսպես, եթե զոհերը (օրինակ՝ եղնիկները) հաջող կերպով գոյատևում ու բազմանում են, ապա աճում է նրանց գլխաքանակը: Գիշատիչների (օրինակ՝ գայլերի) համար դա ավելի հասանելի կերակրային բազա է ստեղծում, ինչը բերում է գիշատիչների գլխաքանակի աճի: Այս աճն իր հերթին հանգեցնում է ավելի հաջողակ որսի, ինչը և բերում է զոհերի գլխաքանակի նվազման: Այսպիսով, այս *բացասական* հետադարձ կապն ապահովում է «գիշատիչ-զոհ» համակարգի կայունացումը մի ինչ-որ հավասարակշիռ իրավիճակի շուրջ[1]: Սակայն, երբեմն, հնարավոր է այս կայունացնող գործընթացների խափանում, երբ դրանց ներսում գոյանում են առանձին՝ արդեն *դրական* հետադարձ կապով օղակներ, որոնք և ապակայունացնում են վիճակը, տանում այն դեպի «կործանում»: Հենց այս գործընթացները Լորենցն անվանում է «մրցավազք ինքներս մեզ հետ»: Այս «մրցավազքը» կարող է առաջանալ հանրության ամենատարբեր մակարդակներում ու երևան գալ շատ անակնկալ կերպով:

Բերենք մի քանի օրինակ:

Ապագան՝ օրիորդների ձեռքերում: Սեռական վերարտադրման համար մղվող պայքարը զարմանալի կերպով կարող է հանգեցնել ոչ միայն տվյալ տեսակի վերարտադրման (ռեպրոդուկտիվ) հաջողությանը, ինչը հասկանալի կլիներ և սպասելի: Ի վերջո, դա է այս պայքարի իմաստը: Բայց որոշ՝ պաթոլոգիկ դեպքերում այն կարող է պարադոքսալ արդյունքի հանգեցնել՝ տվյալ տեսակի հենց վերարտադրման խանգարման: Վերցնենք *արգուս փասիան* թռչունի օրինակը[2]: Էգ արգուսների տեսանկյունից, զուգավորման համար առավել «գրավիչ» են մեծ պոչ (թափքային փետուրներ) ունեցող արուները:

[1] Այս գործընթացը նկարագրվում է քիմիական կինետիկայից ժառանգված Լոտկա-Վոլտերայի հավասարումներով: Դրանք բազմաթիվ խոր և ուսանելի օրինակների աղբյուր են:

[2] *Argusianus argus,* փասիանների ընտանիքից (*Phasianidae*): Այս օրինակը Կ.Լորենցը բերում է՝ հետևելով իր ուսուցիչ Օսկար Հեյնրոթի (*Oskar Heinroth*)՝ 1910-ականներին կատարած դիտարկումներին [3, c. 16]:

էգերի կողմից այս արուների ընտրությունն ամրապնդում է մեծ պոչ ունեցող արուների վերարտադրողական հաջողությունը: Ժամանակի ընթացքում այն արգուսների պոպուլյացիայում հանգեցնում է առավելապես մեծ պոչ ունեցող արուների գլխաքանակի գերակշռմանը: Սակայն այս արուներն արդեն չեն կարողանում լավ թռչել, կորցնում են շարժունակությունը և հաճախ դառնում են գիշատիչների զոհ ավելի վաղ, քան կհասցնեն մտնել վերարտադրողական շրջան: Արդյունքում՝ ողջ պոպուլյացիան կանգնում է ոչնչացման եզրին:

Բնական, հավասարակշիռ պայմաններում այս իրադրությունը սովորաբար չի վերաճում պաթոլոգիկի, և արգուսների պոպուլյացիան քիչ թե շատ պահպանում է գլխաքանակը: Բայց ամեն ինչ փոխվում է «գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների» ժամանակ: Դա, օրինակ, պատահեց արգուսների մոտիկ «ազգական» *քնարապոչ* (*lyrebird*) թռչունների հետ: Նրանց ողջ պոպուլյացիան ոչնչացավ իրենց նոր բնակավայրում, երբ հայրենիքից՝ Ավստրալիայից, նրանց տեղափոխեցին Եվրոպա: Այստեղ գիշատիչներն ավելի շատ էին, ավելի եռանդուն ու բազմազան, քան Ավստրալիայում, և քնարապոչները, չնայած իրենց չքնաղ պոչերին, չդիմացան պայքարին:

Վերցնենք մարդկային հասարակությունը: Մերկ պարանոցը և կարճ զգեստն ուժեղացնում են օրիորդների գրավչությունը տղամարդկանց աչքում և բարձրացնում նրանց վերարտադրողական հաջողության հավանականությունը: Ժամանակի ընթացքում, ներտեսակային սեռական ընտրության ճնշման հետևանքով, գոյանում է յուրատեսակ մրցավազք՝ օրիորդների զգեստները դառնում են էլ ավելի կարճ, պարանոցները՝ էլ ավելի մերկ, ճիշտ ինչպես նախորդ օրինակում ավելի ու ավելի էին երկարում արգուս արուների թափքային փետուրները: Սակայն, նման «մոդայիկ» հագուստի չարաշահումը ոչ մեղմ կլիմա ունեցող երկրներում, օրինակ՝ Հայաստանում, հատկապես վաղ գարնանը, վնասակար է ռեպրոդուկտիվ տեսանկյունից ակտիվ օրիորդների խմբի համար: Ժամանակի ընթացքում սա էականորեն ավելացնում է այս խմբում անպտղության հավանականությունը, ինչը, վերջին հաշվով, վտանգում է ողջ պոպուլյացիայի հաջող վերարտադրումը[1]:

Իսկ հիմա մի պահ պատկերացրեք, թե ինչ կկատարվի մեր հասարակությունում, եթե սեռական ընտրության հետևանքով գոյանան, օրինակ, «գողականությունը» կամ կաշառակերությունն ամրապնդող դրական հետադարձ կապեր: Մանավանդ, եթե այս հետադարձ կապերն ուժգնանան ամեն Աստծո օր հեռուստաէկրաններից մատուցվող ցածրարժեք ու գռեհիկ ֆիլմաշարերով, շոուներով ու հաղորդումներով: Երևույթ, որը մտահոգիչ չափով առկա է մե-

[1] Ասվածը վերացական բան չէ: Այս մեխանիզմի առկայությունը մատնանշվում է 1993-98թթ. Հայաստանում 15-25 տարեկան աղջիկների անպտղության աճի դինամիկային նվիրված որոշ ուսումնասիրություններում: Այս երևույթը, իհարկե, Հայաստանում վաղ 90-ականների դաժան էներգետիկ ճգնաժամի ևս մի տխուր հետևանք է, երբ հանրային նշանակության և բնակելի շենքերում շարքից դուրս եկավ ջեռուցման ողջ համակարգը:

զանում: Այս առումով, մեր ազգային անվտանգության համակարգի կարևոր խնդիրներից է իր զինանոց ներառել սեռական ընտրության մեխանիզմի օգտագործումը՝ խելամտորեն ու նրբանկատ կերպով զսպելով այն անցանկալի և հակառակը՝ ուժեղացնելով այն ցանկալի ուղղություններով:

Ընդ որում, խելամտությունը և նրբանկատությունն այստեղ որոշիչ են:

Հմայել աշխարհը նորից: «Արգուս փասիանի թափքային փետուրներից հետո ներտեսակային ընտրության, թերևս, հաջորդ ամենահիմար արդյունքը ժամանակակից մարդու աշխատանքի տեմպն է»,- գրում էր Լորենցը 1973թ.՝ շարունակելով ցիտել իր ուսուցչին՝ Օ.Հեյնրոթին: Մեկ դար առաջ արված այս դիտարկումն այսօր մեզ տարօրինակ է թվում:

Բանն այն է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո, 90-ականների սկզբից մենք, նորադարձներին բնորոշ մոլեռանդությամբ, վերագնահատեցինք փողը և «բիզնեսը»: Հայտնաբերեցինք մեզ համար «արդյունավետության» ու «պրոֆեսիոնալիզմի» հմայքները՝ ճիշտ ինչպես գովազդի այն օրիորդը, որն իր համար բացահայտեց ներդիրները: Մոռանալով, սակայն, ավելի ճիշտ՝ չցանկանալով տեսնել, թե ինչ ծանր հետևանքների են բերել կուռքի վերածված փողը, խելագար ագահությամբ սնվող ու տոկոսի վրա հիմնված արդի «բիզնեսն» ու բանկային համակարգը, կամ՝ սեռական մրցունակության պատանդ դարձած գործարար «հաջողակությունը», երբ ավելի լավ է լինել անիծյալ, քան անհաջողակ: Մոռանալով, թե ինչ ծուղակն է ընկնում ժամանակի հետ «զոռոցի» ընկած մարդը, ինքն իր հետ մրցավազքի ելած հասարակությունը: Մոռանալով, թե ինչ սթափեցնող հետևությունների են հանգել այս երևույթը քննող Արևմուտքի իրական հսկաները:

Մոռանալով, օրինակ, Վերներ Զոմբարտի (*Werner Sombart,* 1863-1941) վիրահատորեն ճշգրիտ եզրակացությունները, «արդի» կապիտալիզմի ու «բիզնեսի» հիմքում ընկած տոկոսով վարկավորման գործարար ավանդույթի կործանարար ազդեցության խոր վերլուծությունը[1] [4]: Վերջապես, մոռանալով Սուրբ գրքի ահեղ նախազգուշացումը. *ի՞նչ փույթ, թե տիրանաս աշխարհին, բայց կորցնես հոգիդ*:

[1] Զոմբարտի աշխատություններն, իրոք, խորապես և համընդգրկուն ձևով մոռացվել են: Հիշում եմ զարմանքս, երբ 2010թ. սկզբներին *CNN*-ով դիտում էի ԱՄՆ հայտնի հեռուստամեկնաբաններից մեկի՝ Ֆարիդ Զաքարիայի (*Fareed Zakaria*) հաղորդումը, որի ժամանակ նա ներկայացնում էր ոմն մեկի նոր գիրքը՝ նվիրված արդի բանկային համակարգի գործունեությանը, 2008-09թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամին: Զավեշտն այն էր, որ գիրքը ներկայացվում էր որպես «բացահայտում», և գեթ մեկ անգամ չհիշատակվեց ոչ Զոմբարտի անունը, ոչ էլ նրա հայտնի գիրքը՝ նվիրված հարցերի հենց այս շրջանակին: Եվ սա ԱՄՆ ամենախելացի հաղորդումն ու հաղորդավարն էին (սա ասում եմ առանց որևէ հեգնանքի): Հետո հասկացա պատճառը. Հյուսիսային Ամերիկայում Զոմբարտի աշխատությունն անգլերեն թարգմանությամբ առաջին անգամ հրատարակվել է մեկ 1913թ., մեկ էլ 2001թ.՝ կանադական ոչ մեծ հրատարակչի կողմից և աննշան տպաքանակով [4]: Զարմանալի չէ, որ փոխարենը ԱՄՆ-ում հիմա կրկին չափազանց մոդայիկ են ոմն Այն Ռանդի կապիտալիզմի «էության» մասին գրքույկները (Ա.Ռանդը՝ ԱՄՆ դաշնային պահուստի տխրահռչակ ղեկավար Ա.Գրինսփենի գաղափարա-ինդոկտրինացիոն «մայրիկ», նույն ինքը՝ Ալիսա Զինովևնա Ռոզենբաումը): Պատկերը նույնն է նաև Ռուսաստանում: Առաջին հրատարակումը՝ 1912թ., իսկ հաջորդը՝ 2004թ.: Հայերեն թարգմանությունն ընդհանրապես բացակայում է:

Մի կողմ դնենք մարդկային մտքի ուշիմության կորուստը: Մի պահ մոռանանք մերօրյա մտքի կրիտիկականության նվազման, իռացիոնալ մղումների ուժգնացման, ամենագրեհիկ սնահավատության, կեղծ գիտության ու տարատեսակ մարգարեությունների «զարթոնքի» մասին: Մարդկային զգացմունքների բթացման, դրանց «ջերմային մահվան» մասին: Թվարկված բոլոր երևույթներն այս մրցավազքի անմիջական կամ միջնորդավորված արդյունքն են: Սակայն պարտավոր ենք կանգ առնել այս մրցավազքի արդյունք հանդիսացող մեկ այլ երևույթի՝ մարդկային հոգին ամայացնող «զբոսաշրջիկների սուբկուլտուրայի» գոյացման վրա: Երբ, Մաքս Վեբերի (*Max Weber*, 1864-1920) դիպուկ խոսքերով՝ մեր «այլևս ապակախարդված աշխարհում» *ուխտավորներին* ու *ճանապարհորդներին* փոխարինում են *զբոսաշրջիկները*՝ նոր ժամանակների այս նոր քոչվորները, որոնք իրենց հապճեպ արշավների ժամանակ չեն կարողանում ընկալել և ոչ մի հիմնարար բան: Սակայն տարածում են իրենց հոգիների ամայությունը՝ վարակիչ ախտի պես (ի դեպ, սա շատ վարպետորեն ու հեգնական օգտագործված է երիտասարդական հագուստի *Disel* ընկերության «Ապրել արագ» (*Live Fast*) անունը կրող գովազդային կամպանիայում):

Հասկանալի է, իհարկե, որ այստեղ խոսքն ավելի ընդգրկուն երևույթի մասին է, քան բուն զբոսաշրջությունը: Մեր ազգային անվտանգության տեսանկյունից այս երևույթը չափազանց վտանգավոր է: Իրոք, Հայաստանը ողջ Հայության համար հետզհետե դառնում է ամառանոցային մի երկիր, ընդամենը տուրիստավայր, արձակուրդների և հուղարկավորությունների երկիր: Կարծում ենք՝ ուռճացրած չենք լինի, եթե ասենք, որ Հայաստանի Հանրապետությունը կանգնած է Հայության ընդամենը նոր ու յուրօրինակ գաղթօջախի վերածվելու վտանգի առջև: Ինչ խոսք, Հայաստանը կարող է և պետք է տուրիստավայր դառնա: Սակայն, կարծում ենք, որ Հայության համար այն պետք է ավելին լինի: Այն պետք է լինի *Ավետյաց երկիր* և *մետրոպոլիա*: Ոչ ավելի, ոչ պակաս: Ամենայն հարգանքով ՄակՔինզի ընկերության (*McKinsey & Co*) փորձագետների, ակադեմիկոս Ա.Աղանբեկյանի և մեր որոշ պաշտոնյաների ու Ռուսաստանում հայազգի բիզնեսմենների հանդեպ, կարծում եմ, որ երկարաժամկետ հեռանկարում այսպիսի «պարզունակ զբոսաշրջությունը» խարխլում է մեր ազգային անվտանգությունը, թեև (հուսով եմ) ինչ-որ չափով լրացնում է պետբյուջեն:

Ուրախալին այն է, որ զուտ զբոսաշրջային մտածողությանը զուգահեռ՝ ներկայումս ընթանում են նաև այլ, չափազանց ողջունելի գործընթացներ, որոնց զարգացման և խորացման դեպքում համայն Հայությունը կկապվի Հայաստանին շատ ավելի սերտ ու խորը, քան դա ունակ է անել ցանկացած զբոսաշրջություն: Խոսքն, իհարկե, «Արի տուն» ծրագրի մասին է, Համահայկական խաղերի, հայրենիքում կազմակերպվող հայ երիտասարդության տարա-

տեսակ ամառային դպրոցների, գիտական, մարզական կամ մշակութային հավաքների, ճամբարների ու սեմինարների մասին է: Ահա այն գործընթացները, որոնք անմիջականորեն բխելով մեր ազգային անվտանգության երկարաժամկետ հրամայականներից՝ կոփում են վաղվա մեր հավաքական տոկունությունը, ամրապնդում կենսունակությունը և ազգի առողջությունը: Այստեղ կցանկանայինք պարզապես մի հանգամանք շեշտել:

Խոսելով «ապակախարդված աշխարհի» մասին՝ Մ.Վեբերը դրանում «մեղադրում» է նոր ժամանակներին բնորոշ ռացիոնալիզմը և ինտելեկտուալացումը (*intellectualization*), որոնք աշխարհի երեսից պատռում, դեն են նետում խորհրդավորության քողը: Արդյունքում՝ «ամենանուրբ ու խորունկ արժեքները հանրային կյանքից արտամղվում են դեպի «միստիկայի» գիրկը կամ թաքնվում են անհատական հարաբերությունների խորքում» [5]: Կ.Լորենցն ամենայն վճռականությամբ հակադրվում է Վեբերի այս մակերեսային դիտարկմանը՝ մատնանշելով, որ առողջ ռացիոնալ մտածելակերպը, առավել ևս՝ իրական գիտությունը, բոլորովին էլ չեն «ապակախարդում» աշխարհը: Ավելին, միայն դրանք են, որ կարող են բացահայտել աշխարհի *իրական* հրաշքը, զգացնել նրա *խորհուրդը*: Ցիտելով բանաստեղծ-փիլիսոփա Կուրտ Լասվիցին՝ Լորենցն ընդգծում է. Աստված հրաշքների (հոգնակի թվով) կարիքը չունի, և գոյություն ունի միայն Մեկ Հրաշք: Կամ, ինչպես կասեին մեծն Անրի Պուանկարեն ու Էրվին Շրյոդինգերը, իրական հրաշքն աշխարհի ճանաչելիությունն է, այդ թվում՝ ռացիոնալ ճանաչելիությունը:

Հայ երիտասարդների համար ուսումը և գիտությունը դարձնել իսկական արկած, կյանքի տևողությամբ մի ճանապարհորդություն, ուխտագնացություն դեպի բացահայտում. ահա մեր ազգային անվտանգության ոլորտի ամենաէական խնդիրներից մեկը: Մենք պետք է ամրապնդենք հայ երիտասարդների իրական, ռացիոնալ մտածելակերպը և աշխարհին ջինջ աչքերով նայելու նրա ունակությունը: Մեր պարտքն է «նորից հմայել աշխարհը» մեր սերունդների համար[1]:

Ինդոկտրինացիա

Նոր հազարամյակի շեմն անցնելով ու նայելով հետ՝ XX դար, հստակորեն կարող ենք տեսնել, որ չկա ավելի կործանարար, հիրավի՝ «մահացու» մեղք, քան ինդոկտրինացիան է: «Ինդոկտրինացիա» եզրը Լորենցի պատկերացումներով կարելի է սահմանել որպես քննադատական (կրիտիկական) ընկալման սրընթաց, բայց և ժամանակավոր անկման պայմաններում որոշակի օրենքների, վարվելակարգի, արժեհամակարգի կամ հասկացությունների յուրացում-դա-

[1] Ճիշտ և կանոնավոր կազմակերպման դեպքում այստեղ էական դերակատարում կարող են ունենալ գիտական դպրոցները և սեմինարները: Հեռանկարային օրինակներ են ակադեմիկոս Վ.Համբարձումյանի անունը կրող երիտասարդ աստղաֆիզիկոսների ամառային դպրոցները կամ սպինային էֆեկտներին նվիրված Ամբերդի միջազգային կոնֆերանսները և այլն: Սակայն համահայկական և միջազգային մակարդակով երևույթը շոշափելի դարձնելու համար անելիքները դեռ շատ են:

ջում, որից հետո տվյալ անհատի կամ առանձնյակի (*особь, specimen*) համար դրանք դառնում են «անքննելի» ճշմարտություններ՝ դոկտրիններ: Իր արդեն դասական դարձած փորձերի ժամանակ Լորենցը ցայտուն կերպով ցույց տվեց ինդոկտրինացիոն մեխանիզմների ուժը, երբ երիտասարդ բադիկների համար նրանց իրական մայրիկներին կարողացավ փոխարինել սեփական անձով: Ու դեռ երկար ժամանակ բադիկների և սագերի երամները, որոնք շրջապատում էին Լորենցին իր կյանքի գրեթե ողջ ընթացքում, ընկալում էին Լորենցին որպես իրենց իսկական «մայրիկի»:

Դե, ինչ, դժվար չէ այս խաբված բադիկների փոխարեն մտովի պատկերացնել երիտասարդ լենին-ստալինական պիոներ-կոմերիտականներին կամ հիտլերյուգենդի դեռահասներին: Դժվար չէ տեսնել, որ անցած դարի ամենաարյունոտ երևույթների հետևում կանգնած գաղափարախոսությունների թիկունքում, իրենց հերթին, կանգնած էին ինդոկտրինացիոն մեխանիզմները՝ լինեն հայերի կամ հրեաների ցեղասպանությունը, կոմունիզմը, թե նացիզմը, «խունվեյբինները», «կարմիր կխմերները», թե «գորշ գայլերը»: Սակայն ինդոկտրինացիոն մեխանիզմը կարելի է նշմարել և՛ նորաձևությունում, և՛ հասարակական կարծիքի ձևավորման մեջ, ինչպես նաև ծնողների հետ ամենաջերմ կապի ստեղծման, հայրենասիրության ձևավորման, մաքուր ու վսեմ շատ զգացմունքների գոյացման խորքում:

Ի՞նչն է այստեղ կարևորը: Դա ինդոկտրինացիոն մեխանիզմի կենսաբանական մակարդակով անքակտելի կապն է տվյալ անհատի կամ առանձնյակի հոգեբանական հասունացման բնականոն մեխանիզմների հետ: Դա ինդոկտրինացիայի դրսևորումների համընդգրկունությունն է՝ հավատքից մինչև նորաձևություն, ազգային ինքնությունից մինչև այլատյացություն: Դա ինդոկտրինացիոն մեխանիզմի չեզոքությունն է մարդկային նպատակների հանդեպ: Վերջապես, դա ինդոկտրինացիայի արդյունավետության չափազանց զգայունությունն է ժամանակի գործոնի նկատմամբ: Արդյունավետ լինելու համար այն պետք է գործի որոշակի ժամանակ, առանձնյակի, այսպես ասած, «վեգետատիվ հասունացման» շրջանում:

Եվ ամենակարևորը. մարդը, և միայն Մարդն է ունակ ինքնուրույն հաղթահարել իր «դոկտրինները», բայց դա պատահում է հազվագյուտ ու պահանջում է հատուկ ջանք և ուժեղ կամք: Վկան՝ հենց Կ.Լորենցի ոչ հեշտ ճակատագիրն ու կյանքի ուղին:

Մեր ազգային անվտանգության (լայն իմաստով) համակարգի համար երևի թե չկա ավելի սուրբ խնդիր, քան մեր ազգին, մանավանդ մեր երիտասարդ սերնդին ի չարն օգտագործվող ինդոկտրինացիոն մեխանիզմների կործանարար ազդեցությունից պահպանելը: Եվ այստեղ չկա ավելի գործուն միջոց, քան երիտասարդ սերնդի մեջ քննադատական մտածողության ունակությունն անընդհատ բարձր պահելը:

Դիտարկենք ինդոկտրինացիայի մի քանի օրինակ, որոնք այս կամ այն չափով կապված են մեր ազգային անվտանգության հիմնահարցերին:

Չկա գաղտնի որևէ բան, որ չբացահայտվի: Շատերս, ավաղ, գիտենք, թե ինչ կործանարար կարող է լինել սուտն անհատի համար: Ինչպես է այն մարդկային հոգում ծնում հիասթափություն, անտարբերություն ու ցինիզմ: Բայց մեր ժամանակներն անողոքաբար ցույց տվեցին, որ մոտավորապես նույնը կատարվում է նաև ազգերի, մարդկային մեծ հանրությունների հետ՝ այն ժամանակ, երբ փլուզվում են ինդոկտրինացիոն հիմունքների վրա կառուցված ռեժիմներն ու պետությունները, կործանվում գաղափարախոսությունները: Երբ բացվում են արխիվները, հրապարակվում գաղտնի փաստաթղթերը, երևան գալիս պատմական դեպքերի իրական ակունքները և շարժիչ ուժերը: Մենք դրա ականատեսը եղանք հետխորհրդային ողջ տարածքում՝ ԽՍՀՄ փլուզումից հետո: Տեսանք Ֆրանսիայում՝ նացիստական օկուպացիոն ուժերի հետ պետության և հասարակության որոշ հատվածների համագործակցության մասին նյութերի հրապարակմամբ, Գերմանիայում՝ ֆաշիզմի անկումից և վերամիավորումից հետո, Կամբոջայում՝ կարմիր կխմերների արյունոտ տիրակալությունից հետո, ԱՄՆ-ում՝ «Վենոնայի»[1] նյութերի հրապարակումից հետո:

Եվ դեռ կտեսնենք մոտ ապագայում և նորանոր երկրներում, ուր ներկայիս իշխանությունները ստում են իրենց ժողովուրդներին, ինդոկտրինացնում են նրանց: Լինի դա Թուրքիան, որը ժխտում է հայերի ցեղասպանության կազմակերպման փաստը, ուրանում իր անցյալի որոշ էջեր: Լինի դա Ադրբեջանը, որն Արցախը ներկայացնում է որպես իր «պատմական» տարածք, իսկ հայատյացությունը դիտարկում է որպես սեփական ազգային ինքնագիտակցության կայացման և հասարակական կայունության պահպանման գործուն միջոց, եթե չասենք՝ միակ երաշխիք:

Բոլոր այսպիսի պետությունները, կամա թե ակամա, զբաղված են միայն մի բանով. յուրօրինակ պատվար են կառուցում, որն ամբարում է ստի մութ ու կործանարար էներգիան: Բայց, վաղ թե ուշ գալու է պահը, և կեղծիքի այս պատվարները փլուզվելու են: Եվ այդժամ այս ժողովուրդները կհայտնվեն հիասթափության, անտարբերության ու ցինիզմի հորձանուտում, ինչը նորից ու նորից կհետաձգի և կվտանգի այս հասարակությունների ինքնագիտակցության կայացումը:

Անդրադառնանք ինդոկտրինացիոն մեխանիզմների գործունեությանը մեկ այլ մակարդակում: Ուսանողների խմբին հարցրեք. «ո՞վ է ստեղծել հարաբերականության տեսությունը»: 10-ից 9 (եթե ոչ 10-ից 10) դեպքում կստանաք «Էյնշտեյնը» սխալ պատասխանը[2]: Սա զարմանալի երևույթ է, ինդոկտրինա-

[1] Խոսքը ԱՄՆ-ում խորհրդային հետախույզների ծածկագրերի բացահայտման մասին է - *ծան. խմբ.*:

[2] Հենդրիկ Լորենցը և Անրի Պուանկարեն. ահա համարժեք պատասխանը, եթե խոսքը հարաբերականության հատուկ տեսությանն է վերաբերում: Ա.Պուանկարեն, Ա.Էյնշտեյնը և Դ.Հիլբերթը, եթե խոսքը հարաբերականության ընդհանուր տեսության մասին է: Հատկանշական է, որ հարցման արդյունքը գրեթե նույնը կլինի թե՛ Հայաստանում, թե՛ Ռուսաստանում, թե՛ ԱՄՆ-ում և, ինչն ամենազավեշտալին է՝ Ֆրանսիայում, մեծն Ա.Պուանկարեի հայրենիքում:

ցիոն մեխանիզմի հետաքրքիր օրինակ: Չէ՞ որ այս հարցում մեծագույն ֆիզիկոսներ Վ.Պաուլիի և Վ.Հեյզենբերգի աշխատություններից հետո, «եթերի» հանրահայտ պատմաբան, ֆիզիկոս Է.Ուիթակերի (*E.Whittaker*, 1953) կամ ակադեմիկոս Ա.Լոգունովի (1984, 1988, 2004), ռուս ֆիզիկոս-պատմաբաններ Ա.Տյապկինի ու Ա.Շիբանովի[1], գերմանացի ֆիզիկոս-պատմաբաններ Ֆ.Ուինթերբերգի (*F.Winterberg*, 2003), Դ.Վուենշի (*D.Wuensch*, 2007) և այլ գիտնականների հիմնարար հետազոտություններից հետո խոսել «Էյնշտեյնի հարաբերականության տեսության» մասին՝ պարզապես տգիտություն է:

Այնուամենայնիվ, գրեթե ամեն օր, ամենատարբեր լրատվամիջոցներից մենք շարունակ լսում, կարդում և տեսնում ենք. «Էյնշտեյնը՝ XX դարի մեծագույն ֆիզիկոս, հարաբերականության տեսության հիմնադիր»: Ինդոկտրինացիոն այս «*ագիտպրոպի*» անդադար գործունեությունը, նախ, վկայում է դրա հետևում թաքնված ուժի, կամքի և միջոցների առկայության մասին: Եվ երկրորդ՝ վկայում է, որ այդ ուժը լավ է հասկանում անընդմեջ գործելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Չէ՞ որ յուրաքանչյուր տարի ինչ-որ սերունդ մտնում է «վեգետատիվ հասունացման» շրջան, իսկ արդյունավետ լինելու համար ինդոկտրինացիան չպետք է բաց թողնի և ոչ մի սերունդ[2]:

Նոր աշխարհակարգը: Անդրադառնանք նախորդի հետ կապված, սակայն մեր ազգային անվտանգության համար շատ ավելի կարևոր, Հայության խնդիրների համար շատ ավելի վնասակար ու վտանգավոր ինդոկտրինացիոն օրինակին՝ «հրեաների Հոլոքոստը XX դարի «ուշադրության արժանի» միակ ցեղասպանությունն է» դրույթին, որը նույնպես անդադար կարելի է լսել, կարդալ և տեսնել արդեն ոչ միայն տարբեր լրատվամիջոցներում, այլև տարբեր քաղաքական և աշխարհաքաղաքական նշանակության փաստաթղթերում: Բերենք մի օրինակ:

Վերջերս շատ է խոսվում ու գրվում Նոր Աշխարհակարգի (հենց այսպես՝ մեծատառերով) անխուսափելի գալստյան մասին: Այս խոսակցություններից, հոդվածների ու փաստաթղթերի այս տարափից կարելի է ենթադրել, որ խոսքը Երկրորդ աշխարհամարտի արդյունքներով պայմանավորված աշխարհակարգի (վառ օրինակ՝ Յալթայի կոնֆերանսի համաձայնությունները, այդ թվում՝ գաղտնի) փոփոխման մասին է: Առավել ևս, որ հաղթանակած պետություններից մեկը՝ ԽՍՀՄ-ն այլևս գոյություն չունի: Դիտարկենք այս առումով հատկանշական մի փաստաթուղթ՝ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի 2009թ. հունիս-հուլիսյան այսպես կոչված Վիլնյուսյան հռչակագիրը [6][3]:

[1] Վերջիններս բոլոր լեզուներով գրված Ա.Պուանկարեի, թերևս, լավագույն կենսագրության հեղինակներն են:

[2] Հիշո՞ւմ եք Օլդոս Հաքսլիի ուտոպիայից անլռելի «բլա-բլա-բլա մեքենաները», և փառք Աստծո, չեք հիշի ստալինյան ժամանակների անլռելի «ռադիո-թասերը»:

[3] Այն զարմանալիորեն քիչ ուշադրության արժանացավ հայկական վերլուծական հանրության կողմից, որն այդ ժամանակ հիմնականում զբաղված էր հայ-թուրքական մերձեցման խնդիրներով (այս երկու երևույթների զուգահեռականությունն ինքնին տագնապեցնող է):

Միանգամայն համահունչ «Նոր Աշխարհակարգի» գալստյան գաղափարախոսությանը՝ այն առաջարկում է վերանայել ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական հարձակման իրողությունները, այսուհետ առանձնահատուկ նշել օգոստոսի 23-ը (Ռիբենտրոպ-Մոլոտով տխրահռչակ պակտի կնքման օրը)՝ որպես «զանգվածային բռնությունների և մահապատիժների զոհերի հիշատակի օր»[1], և անդրադառնում է «Նոր Աշխարհակարգի» էլի մի քանի կարևոր խնդիրներին, այդ թվում՝ փոկերի որսի հիմնահարցին և մուրացկան երեխաների իրավունքներին: Հայ մարդու շունչը կկտրվի այն ժամանակ, երբ նա կհասնի այս փաստաթղթի 53-րդ էջին, ուր հայտարարվում է այս «Նոր Աշխարհակարգի» կարևոր դրույթներից մեկը՝ հրեական Հոլոքոստի *բացառիկությունը* [6, c. 53]:

Ուրեմն, մարդակեր մի ռեժիմի կողմից իրականացված *հրեաների* ցեղասպանությունը, որի աշխարհաքաղաքական հետևանքով ստեղծվեց հրեաների ազգային օջախն ու ամրապնդվեց հրեական պետականությունը, միանգամայն բացառիկ երևույթ է, արժանի ԵԱՀԿ անդամ 56 երկրների անմար հիշողությանը: Արժանի հակահրեականության արատավոր երևույթի դեմ մեր ուշիմությունն արթուն պահող մշտական ղողանջի: Իսկ մեկ այլ մարդակեր ռեժիմի կողմից իրականացված *հայերի* ցեղասպանությունը, որի աշխարհաքաղաքական հետևանքով հայ ժողովուրդը զրկվեց իր ազգային և պատմական օջախից ու սփռվեց աշխարհով մեկ, դե, երևույթ է, էլի: Գուցե արժանի որոշ զղջման, բայց բնավ ոչ պարտավորեցնող քաղաքական որոշման կամ, առավել ևս՝ աշխարհաքաղաքական որևէ հետևանքի: Իսկ մեր հարևանների կենսաբանական հայատյացությունը, մեր տարածաշրջանում հայկական մշակութային կոթողների և ժառանգության ոչնչացումը, էլ չենք ասում Հայաստանը խեղդամահ անող շրջափակումը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նման բարձր ատյանի ուշադրությանն ընդհանրապես արժանի հարցեր չեն: «Դե, եկ, վարդապետ, եկ ու մի ցնդիր»՝ կասեր Սևակը:

Աշխարհի կրկնակի վերադարձը: Անդրադառնանք «ինդոկտրինացիա» մեղքի ևս մի արտահայտման:

Գիտելիքների հայալեզու մեր ազգային դաշտն այսօր կանգնած է ծանրագույն խնդրի առջև: Բանը հետևյալն է: ԽՍՀՄ գոյության 70 տարիների ընթացքում հայ միտքն իրական զարթոնք ապրեց գիտելիքների գրեթե ողջ տիրույթում՝ հիմնարար գիտությունից մինչև գեղարվեստ ու մշակույթ: Սակայն կոմունիստական գաղափարախոսության սահմանափակումների հետևանքով գիտելիքների այդ համակարգը ստեղծվեց ու կառուցվեց աղճատված, դեֆորմացված: Հիշենք միայն գենետիկայի կամ կիբեռնետիկայի օրինակները, ամբողջովին դեֆորմացված պատմության, հոգեբանության կամ հասարակագիտության ոլորտները: Այլ խոսքով՝ գիտելիքների հայալեզու համակարգը ՀԽՍՀ ժամանակ կրում էր վառ արտահայտված ինդոկտրինացիոն բնույթ:

[1] Իսկ ինչո՞ւ ոչ Մյունխենի պայմանագրի կնքման օրը: Կամ Ռուս-ֆրանսիական ռազմական պայմանագրի կնքման օրը (1892թ. օգոստոսի 17-ը՝ նրանց համար, ով չի հիշում), որը, եթե հավատանք Մ.Վեբերին, անխուսափելի դարձրեց Առաջին աշխարհամարտը [7, c. 148]: Կամ, գրողը տանի, ինչո՞ւ ոչ *Ապրիլի 24-ը:*

Տարօրինակն ու ցավալին այն է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո գիտելիքների հայալեզու համակարգը չթոթափեց այս ինդոկտրինացիոն լուծը: Այն պարզապես փոխարինվեց մեկ այլ՝ «շուկայական հարաբերությունների» լծով, ոչ պակաս կործանարար, մանավանդ եթե հաշվի առնենք մատուցվող նյութերի որակի պարզապես աղետալի անկումը: Ռուսալեզու գիտելիքների համակարգը, որը հայ մտքի համար առնվազն մեկ դար եղել է աշխարհի բացահայտման կարևորագույն աղբյուր, ԽՍՀՄ փլուզումից հետո ինչ-որ չափով շտկեց իր դեֆորմացվածությունը, մանավանդ 80-ականների վերջին և 90–ականների սկզբին թարգմանությունների ու հրատարակումների առաջին՝ «ռոմանտիկ» ալիքի ժամանակ: Բայց վիճակն այստեղ նույնպես հեռու է հավասարակշիռ լինելուց:

Այսպիսով, այս էլ գրեթե մեկ դար մենք աշխարհը տեսնում ենք կրկնակի խեղաթյուրված, բացահայտում ենք այն, այսպես ասած, հետընթաց տրամաբանությամբ, աշակերտից՝ ուսուցիչ, մեկնաբանող-կոմպիլյատորից՝ իրական հեղինակ, վատից՝ լավ, կեղծից՝ իսկական: Օրինակ, սովետական գռեհկացված սոցիոլոգիայի պարագայում մոտ 70 տարի մենք չգիտեինք Մ.Վեբերի աշխատանքների մասին: Բայց, կապիտալիզմի ձևավորման ակունքներին ու էությանը նվիրված Վեբերի աշխատություններին մենք ռուսերեն թարգմանություններով ծանոթացանք ավելի վաղ (1991թ.), քան Վ.Զոմբարտի հիմնարար ուսումնասիրություններին (2004թ.): Կամ՝ երկար ժամանակ Լատինական Ամերիկայի գունեղ գրականությունը մենք գիտեինք հիմնականում Պ.Ներուդայի օրինակով: Տասնամյակներ անց, XX դարի 70-ականների սկզբին սկսվեց այն, ինչ մի փոքր ավելի ուշ կոչվեց [Լատինական] «Ամերիկայի 2-րդ բացահայտում»[1]: Իրար հաջորդեցին Խ.Կորտասարի, Մ.Աստուրիասի, Գ.Մարկեսի, Ա.Կարպենտյերի, Կ.Ֆուենտեսի և Վ.Լյոսայի առաջին ռուսերեն հրատարակումները: Սակայն պահանջվեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ.Բրեժնևի մահը և «նոր մտածելակերպի» գալուստը, որ ռուսերեն առաջին անգամ հրատարակվի Խորխե Լուիս Բորխեսը[2]: Դե, իսկ մեր անբռնազբոս ժամանակները ծանոթացրին մեզ ընդամենը ոմն Կուելիոյի հետ: Մինչդեռ աշխարհը նրանց ճանաչել է բոլորովին այլ ժամանակագրությամբ և գիտելիքների իր շտեմարանում տեղավորել է միանգամայն այլ հիերարխիայով: Փաստորեն, մենք «վերաբացեցինք Ամերիկան»՝ կիսատ-պռատ ու աղճատված, թերանալով «բացել» այն առաջին անգամ՝ ժամանակին ու լիարժեք: Եվ այսպիսին է մեր գիտելիքների դաշտի իրավիճակը գրեթե բոլոր ոլորտներում՝ լինեն հասարակագիտություն, թե դինամիկ համակարգերի տեսություն, զանգվածների հոգեբանություն, թե հաշվիչ մեքենաների ճարտարապետություն, պատմություն, էներգախնայող տեխնոլոգիաներ, թե փիլիսոփայություն:

[1] Տե՛ս Լ.Օսպովատի ներածությունը (*Х.Кортасар*, Избранное. М., 1976):

[2] Բորխեսի ռուսերեն առաջին ժողովածուի հրատարակումը 1984թ. շատ իմաստներով հնարավոր եղավ Ինա Տերտերյանի ջանքերի շնորհիվ: Բորխեսի հայերեն հրատարակումները հայտնվեցին միայն բոլորովին վերջերս:

Շտկել մեր աշխարհընկալման կրկնակի խեղաթյուրումը, ներդաշնակեցնել գիտելիքների հայալեզու համակարգը, ամոքել նրան հասցված «ինդոկտրինացիոն» խոր վերքերը, փակել առկա սոսկալի բացերը. սրանք ապագային միտված, թերևս, ամենակարևոր խնդիրներից են, որոնք կանգնած են մեր պետության ու հասարակության առջև: Առանց այս խնդիրների լուծման մեր ազգային անվտանգությունը կլինի խոցելի: Այս առումով, պատշաճ թարգմանչական և գրահրատարակչական քաղաքականության մշակումն ու վարումը մեր ազգային անվտանգության համար ունեն ոչ պակաս նշանակություն, քան հետախուզական/գրոհային անօդաչու սարքերի օգտագործումը կամ «արդի տուրիստական ենթակառուցվածքի զարգացումը»՝ ինչ էլ որ նշանակի այս բառակապակցությունը:

Քարտեզները և ազգային անվտանգությունը

Քարտեզներն «ինչպիսի՞ն է աշխարհը» հարցի, թերևս, ամենախտացված ու պատկերավոր պատասխաններն են, աշխարհաքաղաքական կոնստրուկտների և ազգային անվտանգության համակարգերի խոսուն խորհրդանիշեր: Հաճախ բավական է մի փոփոխություն կատարել դրանցում, օրինակ՝ փոխել աշխարհագրական պրոյեկցիան, և արդեն սովորական դարձած իրականությունն ի հայտ է գալիս մի նոր ու անակնկալ կերպով:

Այսպես, XX դարի սկզբին աշխարհի քարտեզներում XVI դարից ի վեր սովորական դարձած Մերկատորի պրոյեկցիան առաջին անգամ փոխարինվեց օրտոգրաֆիկ պրոյեկցիայով[1]: Նոր քարտեզում Եվրոպան անսովոր գաճաճ տեսք ուներ հսկայական Ասիայի և Աֆրիկայի համեմատ, իսկ Ամերիկան իրոք որ մի կղզյակ լիներ Եվրասիական հսկայի երկու ափերի միջև: Հասկանալի է, թե ինչ պարարտ հող էր սա «ատլանտյան» մտածելակերպի (քիչ էր մնում ասեի՝ «բարդույթի») կայացման համար: Ավելի ուշ երևան եկավ Գալ-Պետերսի հավասարատարածք գլանային պրոյեկցիայով քարտեզը, ուր մայրցամաքների հարաբերական չափերը շատ ավելի ճշգրիտ են պատկերված: Այս կարծես թե ոչ այնքան էական հանգամանքն իսկական «կուլտուրշոկ» առաջացրեց, նպաստեց եվրակենտրոն[2] աշխարհաքաղաքականության ճգնաժամին ու օժանդակեց Եվրասիականության զարթոնքին: Ուսանելի է թերթել այն հրապարակումները, որոնք նկարագրում են Ազգերի լիգայի (հետագայում՝ ՄԱԿ) պաշտոնական խորհրդանիշ դառնալու համար տարբեր

[1] Աշխարհագրական մեծագույն հայտնագործությունների ժամանակաշրջանի պահանջները բավարարող ֆլամանդացի աշխարհագրագետ Մերկատորի պրոյեկցիայով քարտեզները, որոնցում այսպես կոչված ռումբային գծերը (*rhumb lines*) պատկերվում են ուղիղ գծերով, համեմատաբար ճշգրիտ կերպով պատկերում է Ատլանտյան օվկիանոսի տարածքը՝ էական խեղաթյուրումների ենթարկելով երկրների և մայրցամաքների հարաբերական չափերը: Օրտոգրաֆիկ պրոյեկցիան մայրցամաքների հարաբերական չափերը պատկերում է ավելի համարժեք:

[2] «Եվրոպոցենտրիզմ» (*europa-zentrisch*) եզրը պատկանում է արդի աշխարհաքաղաքականության հիմնադիր հայրերից մեկին՝ Կարլ Հաուսհոֆերին (*Karl Haushofer,* 1869-1946, տե՛ս *K.Haushofer,* Geopolitik des pazifischen Ozeans, Berlin, Kurt Vowinckel Verlag, 1924, pp. 11–23).

պրոյեկցիաներով աշխարհի քարտեզի ընտրության հետ կապված կատաղի բանավեճը[1]: Սակայն քարտեզագրական պրոյեկցիան դեռ ամենը չէ:

Իրական աշխարհը: Թերթենք 2008թ. հրատարակված «*The Real World*» շատ ուշագրավ աշխարհագրական ատլասը [8], որից բերենք մի քանի օրինակ: Ահա այսպիսին է Գալ-Պետերսի պրոյեկցիայով աշխարհը, եթե նրա բոլոր մայրցամաքները և երկրները պատկերվեն համապատասխան իրենց զբաղեցրած մակերևույթների *(Քարտեզ 1)*: Ուշադրություն դարձրեք, թե որքան մեծ են Աֆրիկան և Եվրասիան Մերկատորի պրոյեկցիայով պատկերների համեմատ: Իսկ ահա այսպիսին է աշխարհը, եթե երկրները պատկերվեն ըստ դրանց բնակչության թվի (2008թ. դրությամբ, *Քարտեզ 2*): Տեսեք, թե ինչպես է սեղմվել Ռուսաստանը՝ Չինաստանի և Հնդկաստանի համեմատ: Որքան հստակ են երևում մեր տարածաշրջանի հսկաները՝ Իրանը և Թուրքիան: Հաջորդը աշխարհն է տվյալ երկրում տպագրված գրքերի քանակի տեսանկյունից: Պատկառելի են որոշ արևելաեվրոպական երկրների չափերը՝ Լեհաստան, Հունգարիա, զգալի է նաև Բելառուսը: Սեղմված են Թուրքիան ու Մերձավոր Արևելքը, մանավանդ հսկա Անգլիայի, Գերմանիայի և Իսպանիայի համեմատ *(Քարտեզ 3)*:



[1] Ի վերջո, ստանալով Գերմանիայի այն ժամանակվա կանցլեր Վիլի Բրանդի հավանությունը, ՄԱԿ պաշտոնական խորհրդանիշերում և հրատարակումներում ընդունվեց Գալ-Պետերսի պրոյեկցիայով քարտեզը: Այս առումով հետաքրքիր հրատարակում է՝ *Mark Monmonier,* Rhumb Lines and Map Wars: A Social History of the Mercator Projection. University Of Chicago Press, 2004.



Վերջապես իմ սիրելի քարտեզը՝ աշխարհը ծանր մեքենաշինության ծավալների տեսանկյունից (ընդգծենք՝ առանց ավտոմեքենաշինության, *Քարտեզ 4*): Ինչպես տեսնում ենք, տրանսֆորմացիան այստեղ ամենացայտունն է: Այս աշխարհը, ըստ էության, բաղկացած է Գերմանիայից, Ճապոնիայից և Իտալիայից: Անհետացել են ոչ միայն առանձին երկրներ, այլև ողջ մայրցամաքներ: Չքացել է նույնիսկ ԱՄՆ-ը, էլ չասած Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի, Ռուսաստանի կամ Ավստրալիայի մասին: Երկրորդ աշխարհամարտի ավարտից 65 տարի հետո այս քարտեզը մտորումների տեղիք է տալիս: Դժվար է թոթափել այն զգացումը, թե այն կգոհացներ «Բեռլին-Հռոմ-Տոկիո» առանցքի երկրների ղեկավարներին:

Նայելով այս քարտեզին՝ կարծում ենք, պատեհ առիթ է ինքներս մեզ հարց տալ. «Մի՞թե իրոք մենք ապրում ենք «պոստինդուստրիալ» ժամանակներում»: Մի՞թե այս բառակապակցությունն ինչ-որ իմաստ ունի: Մի՞թե ԽՍՀՄ փլուզումը, ԱՄՆ աշխարհաքաղաքական ներկայիս նահանջը, Եվրոպայում Գերմանիայի հզորացումը (եթե չասենք՝ տնտեսական հեգեմոնիան) կամ «Նոր Աշխարհակարգի գալուստն» այս մեկ քարտեզի ընդամենը տրամաբանական հետևությունները չե՞ն: Եվ արժե՞ արդյոք, որ մեր ազգային գիտակցությունը՝ ի դեմս մեր առաջատար վերլուծաբանների, այդքան հեշտությամբ տարվի տարատեսակ «պատմության ավարտի», «պոստինդուստրիալ հասարակությունների», «3-րդ, 4-րդ և այլ ալիքների», «կառավարվող քաոսի», «ազգ-պետությունների անխուսափելի մահվան» և նմանատիպ հնչեղ, սակայն առնվազն հարցա-

կան, եթե ոչ՝ դատարկ ձևակերպումների «ցանցակենտրոն» ազդեցությամբ: Իհարկե ոչ: Կարծում ենք, որ այս առումով մեր ազգային անվտանգությունը պետք է խարսխվի «*ռոբաստ*» հիմքի վրա, լինի կայուն ու ամուր: Ինչպես կասեր Սայաթ-Նովան՝ «Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է»: Մեր նշանաբանը պետք է լինի «ականջ մի դրեք հնչեղ տերմինաբանությանը, նայեք միայն գործերին»: Իսկ գործերը բավական խոսուն են:

Անդրկովկասը որպես Հարթլանդի սիրտ: Շարունակենք հետաքրքիր քարտեզների մեր դիտարկումը (տե՛ս *Նկար 1,* ձախից՝ աջ և վերից՝ վար): Ահա 1904թ. այն պատմական քարտեզը, որը նշանավորեց արդի աշխարհաքաղաքականության ծնունդը: Սա Օքսֆորդի աշխարհագրական ընկերությանը ներկայացրած Հալֆորդ Մակքինդրի (*Halford J. Mackinder,* 1861-1947) հայտնի զեկույցի քարտեզի պատճենն է [9]: Ինչպես տեսնում ենք, հանրահայտ «*Հարթլանդն*»[1] այստեղ դեռ կոչվում է «առանցքային տարածք» (*Pivot Area*): Նկատենք, որ Հարթլանդի հարավային սահմանը ճեղքում-անցնում է Անդրկովկասը: Ահա և Նիկոլաս Սպայքմանի (*Nicholas J. Spykman,* 1893-1943) 1938-39թթ. հայտնի «*Ռիմլանդի*»[2] քարտեզը [10]: Համաձայն Սպայքմանի, աշխարհաքաղաքական ակտիվ գործընթացները պայմանավորված կլինեն Ռիմլանդի և Հարթլանդի սահմաններին գոյացող լարվածություններով, հատկապես դրանց հարավային էշելոնում, այսինքն՝ Անդրկովկասում: Ահա և Զ.Բժեզինսկու (*Zbigniew Brzezinski*) «Եվրասիական Բալկաններ» քարտեզը՝ իր հայտնի «շախմատային» ձեռնարկից [11]: 1997թ. այս քարտեզը, չգիտես ինչու, համարվեց աշխարհաքաղաքական հայտնագործություն, չնայած գրեթե ամբողջությամբ կրկնում էր Սպայքմանի շատ ավելի վաղ դիտարկումները: Նորից տեսնում ենք, որ Անդրկովկասը գտնվում է աշխարհաքաղաքական գործընթացների կիզակետում:

Հաջորդ քարտեզն Ինտերնետում գործող բազմաթիվ աշխարհաքաղաքական կենտրոններից մեկի պատկերացումն է մեր տարածաշրջանի մոտալուտ ապագայի մասին[3]: Ինչպես տեսնում ենք, մասնատված Իրաքի փլատակների վրա հայտնվել է նոր՝ քրդական պետությունը, որը գրավել է պատմական Հայաստանի մի զգալի մասը, կտրել է Թուրքիան Հարավային Կովկասի հանրապետություններից: Ադրբեջանն իր հերթին զգալիորեն մեծացել է Իրանի հյուսիսային հատվածի հաշվին: Իրաքից բացի, մասնատվել են Պակիստանը և Ս.Արաբիան, իսկ Իրանը, բացի հարավային Ադրբեջանից, կորցրել է Պարսից ծոցի ափեզրի մի զգալի հատված. այն դարձել է նախկին Իրաքի պատառ հանդիսացող «Արաբական շիա պետության» մաս: Այս քարտեզում նույնպես էական աշխարհաքաղաքական և աշխարհագրական փոփոխությունները նորից կիզակետվում են մեր տարածաշրջանում:

[1] Հարթլանդ (*Heartland*) - կենտրոնական կամ «սիրտ-տարածք»: Այս անվանումը Մակքինդրը կներմուծի միայն 1919թ.՝ ընդլայնելով Առանցքային տարածքի հարավարևմտյան սահմանը:
[2] *Rimland* - եզրային տարածք:
[3] http://bigthink.com/ideas/21057

Նկար 1

Անդրկովկասը որպես Հարթլանդի սիրտ

Ահա և պանթուրքական աշխարհի բազմաթիվ քարտեզներից մեկը[1]: Հստակորեն նշմարելի են նրա սիրտը դաշույնի պես խրված քրիստոնյա Հայաստանն ու Վրաստանը: Հասկանալի է, թե սա ինչ լարված կիզակետ է նշանակում: Հաջորդը 2053թ. մեր ապագան պատկերող ռուսական նեոկայսերական երևակայական քարտեզներից մեկն է[2]: Նորից Անդրկովկասն այստեղ

[1] http://geopolitica.ru/Maps/3/#_ftn9
[2] http://bigthink.com/ideas/21229

ճեղքված է Իսլամական խալիֆայության և Ռուսական կայսրության միջև:

Բոլոր այս քարտեզները բերում ենք միայն մի նպատակով. ցույց տալ, որ այս էլ մեկ դար (իրականում՝ հազարամյակներ) Հարավային Կովկասը և Հայաստանը, իրոք, հանդիսանում են աշխարհաքաղաքական կիզակետ, ճեղքված տարածք՝ բնույթով չափազանց տարբեր աշխարհաքաղաքական համատեքստերում, լինի դա «ատլանտիզմ», «պանթուրքիզմ», թե «ռուսական սրբազան կայսրություն»: Սա մեր երևակայությունը չէ, ոչ էլ մեր հիվանդագին եսակենտրոնության արգասիք: Սա իրողություն է՝ դառը և դաժան, կամ խոր և խոստումնալի՝ կախված աշխարհընկալումից: Բոլոր այս պատմություններում (կամ, ինչպես ասում են մեր առավել պրոգրեսիվ վերլուծաբանները՝ *նարատիվներում*), Հարավային Կովկասն իրապես Հարթլանդի սիրտն է (*heart of the Heartland*)[1]: Սիրտը սրտոց՝ ինչպես Երգը երգոց: Դե, իսկ ով կտիրի Հարթլանդին …

Ուստի, մեր ազգային անվտանգության հրամայականներից մեկը, կարծում եմ, այն է, որ հայի հավաքական միտքն այսուհետ և ընդմիշտ պետք է դադարի վերաբերվել Ալաշկերտի հովտին, Ճորոխի կիրճին, Բարդուսի լեռնանցքին կամ Ուրֆայի բարձունքներին միայն պատմական, հուզական կամ ազգագրական տեսանկյուններից: Կարին/Էրզրումը, «Ալեքսանդրեթի սանջակը», Ջուղայի երկաթուղային հանգույցը, Ախալցխան, «սիրուն Ադանան» կամ «Լաչինի միջանցքը» սոսկ տեղանուններ չեն, այլ միշտ *ինչ-որ մեկի* աշխարհաքաղաքական *նարատիվների* կարևորագույն դրվագներ՝ հավատացնում եմ Ձեզ: Եվ կարևոր է, որ դա լինի *մեր* աշխարհաքաղաքական նարատիվը: Առնվազն՝ *նաև մերը*: Ժամանակին սա շատ լավ էին հասկանում Մուսթաֆա Քեմալն ու Քարաբեքիր փաշան: Նրանք կարող էին քարտեզ կարդալ, կարդալ որպես գենշտաբի սպաներ: Նրանց մոտեցումը պարզ էր ու հստակ. «ով կտիրի Էրզրումին, նա կտիրի Անատոլիային: Ով կտիրի Անատոլիային, նա կտիրի Թուրքիային: Ով կտիրի Թուրքիային, նա կտիրի Հարթլանդին»: Իսկ հետո՝ ըստ դասական սահմանման:

Արդյունքում՝ *մեր* հայրենիքն ընդամենը մի քանի տասնյակ հազար քառ. կիլոմետր տարածք ունի, և ոչ թե մի քանի հարյուր: Իսկ մեր նավատորմը բաղկացած է միայն մեկ առագաստանավից, որը նույնիսկ նավահանգիստ չունի հանգրվանելու:

[1] Պատկերացնում եմ պրն Դուգինի զարմանքը Հարավային Կովկասի այսպիսի որակման կապակցությամբ (տե՛ս *Дугин А.Г.,* Основы геополитики, М., Арктогея, 1997):

Նկար 2



Աշխարհի մոդելային խաղերը: Այս քարտեզները մենք բերում ենք ևս մեկ նպատակով: Սակայն սկզբում ներկայացնեմ շատ հետաքրքիր մի գիտնականի, պարադոքսալ և էքսցենտրիկ մի մտածողի՝ գյուտարար և ճարտարապետ Բաքմինստր Ֆուլերին (*Buckminster Fuller,* 1895-1983): Գուցե նա ձեզ հայտնի է իր չափազանց տեխնոլոգիկ, թեթև ու ամուր, այսպես կոչված՝ *գեոդեզիկ* գմբեթների գյուտով (տե՛ս *Նկար 2,* վերևում) կամ Երկրագնդի այսպես կոչված *դիմաքսիոն* պրոյեկցիայի շատ անսովոր իր «գլոբուսով» (*Նկար 2,* ներքևում՝ ձախից): Միգուցե նրա անունը ծանոթ լինի ածխածին-60 մոլեկուլի կառուցվածքային

մոդելի անունով՝ այսպես կոչված «Բաքիբոլ» կամ «Ֆուլերոն»: Քչերը, սակայն, գիտեն, որ Ֆուլերը նաև «Աշխարհը» խաղի հեղինակն էր և այդ մոդելային խաղերի երկարամյա վարողը: Մահից քիչ առաջ, 1982թ. մոդելավորումների ընթացքում Ֆուլերն առաջարկեց էլեկտրաէներգիայի հաղորդման բարձրավոլտ գծերի համաշխարհային մի ցանց (*Նկար 2,* ներքևում՝ աջից), որը կոչված էր լուծել երկրների էլեկտրաէներգետիկ մատակարարման բազում գլոբալ հիմնախնդիրներ[1]: Մասնավորապես, այս ցանցը թույլ կտար Սահարայում իրականացնել արեգակնային հսկայական էլեկտրակայանների շինարարությունը և ստացված էլեկտրական էներգիան տեղափոխել Եվրոպա և Ասիա: Ուշադրություն դարձրեք, որ այս ցանցի կարևոր ճյուղերից մեկը նորից ճեղքում-անցնում է Անդրկովկասը: Հայաստան-Վրաստան-Թուրքիա խաչմերուկը նորից այս գլոբալ ցանցի հանգույցներից է, նրա կիզակետերից մեկը:

Ինչ խոսք, Ֆուլերի էլեկտրաէներգետիկ բարձրավոլտ գլոբալ ցանցի այս ծրագիրը բավական հանդուգն էր և իր ժամանակի համար կարող էր ուտոպիական թվալ: Սակայն առաջարկվող ցանցի տեղագրությունն ու տոպոլոգիան հենված էին միանգամայն լուրջ, հիմնավոր և համարժեք հետազոտությունների արդյունքների վրա: Դրա վկայությունն այն է, որ համարյա երեք տասնամյակ անց իրականություն են դառնում Ֆուլերի ցանցի առանձին հատվածները, օրինակ՝ Սև կամ Միջերկրական ծովերի բարձրավոլտ հաղորդագծերի օղակները: Իսկ Հայաստան-Վրաստան-Թուրքիա խաչմերուկն այսօր տարածաշրջանում էլեկտրաէներգետիկ չափազանց լարված մրցակցության թատերաբեմ է:

Խոսքս 400 կՎ և ավելի բարձր լարման դասի էլեկտրահաղորդման տարածաշրջանային ցանցի ստեղծման ներկայիս գործընթացների մասին է: Տագնապալին այստեղ այն է, որ Հայաստանը կարող է այս գործընթացներից արտաքսված լինել՝ ճիշտ այնպես, ինչպես արտաքսվեց նավթագազատարների և ընդհանրապես էներգատրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման տարածաշրջանային ծրագրերից: Այս առումով գործընթացներն այսօր կենտրոնացած են Բորչկա (Թուրքիա) - Ախալցխա (Վրաստան) 650 ՄՎտ թողունակությամբ 400 կՎ լարման դասի գծի շինարարության վրա: Մինչդեռ, մասնագիտական անգամ թռուցիկ հայացքը մեր տարածաշրջանի քարտեզի վրա բավարար է հասկանալու համար, որ տարածաշրջանային էլեկտրաէներգետիկ իրական համագործակցությունը ենթադրում է շատ ավելի արդյունավետ և հեռանկարային Հորասան – Կարս (Թուրքիա) – Հոկտեմբերյան (Հայաստան) 1000 ՄՎտ թողունակությամբ հաստատուն հոսանքի համակցմամբ 400 կՎ գծի նախագծումն ու կառուցումը: Այն հնարավորություն կընձեռի համակցել այս գիծը Հայաստան-Իրան արդեն իսկ գոյություն ունեցող 400 կՎ լարման

[1] www.bfi.org

դասի ցանցին, ինչպես նաև Վրաստան-Ռուսաստան 400-500 կՎ հեռանկարային ցանցին: Բայց ինչո՞ւ, հակառակ մասնագիտական տրամաբանության, գործընթացները գնում հենց Բորչկա-Ախալցխա ուղղությամբ:

Պատասխանը թաքնված է 2006-07թթ., այսինքն՝ մինչև վրաց-օսական պատերազմը և ՌԴ կողմից Հ.Օսիայի ու Աբխազիայի անկախության ճանաչումն իրականացված մի շարք, հիմնականում՝ գերմանական ծագում ունեցող ուսումնասիրությունների արդյունքներում: Դրանք կանխորոշում են էլեկտրաէներգետիկ ոլորտում մեր տարածաշրջանում ներկայումս ընթացող գործընթացները: Այս առումով դասական օրինակ է 2007թ. գերմանական *Ֆիխներ (Fichtner GmbH)* ընկերության ծավալուն ուսումնասիրությունը [12]: Այստեղ առաջարկվում են 18 խոշոր նախագծեր, որոնցից 12-ը (70%-ը) նվիրված են Վրաստանի էլեկտրաէներգետիկ ոլորտին, այդ թվում՝ վերը նշված Բորչկա-Ախալցխա ծրագիրը: Այս 18 նախագծերի համար նախատեսված ընդհանուր մոտ €400 մլն ծավալից Հայաստանի «մասնաբաժինը» կազմում է €27 մլն, այսինքն՝ 7%: Մինչդեռ Վրաստանի «մասնաբաժինը» կազմում է €345 մլն (86%), և ևս €26 մլն նախատեսվում է Թուրքիայի համար:

Ծիծաղելին այն է, որ այս ուսումնասիրությունը կոչվում էր «Կովկասյան տարածաշրջանի էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման հեռանկարները»: Սակայն ավելի տրամաբանական կլիներ, որ այն կոչվեր «Արտաքսենք Հայաստանը տարածաշրջանային ենթակառուցվածքների զարգացումներից, այս անգամ՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում»: Այն ֆինանսավորվում էր գերմանական *KfW* բանկի և Եվրոպայի վերակառուցման և զարգացման բանկի (*EBRD*) կողմից Սև ծովի երկրների տնտեսական համագործակցության կազմակերպության շրջանակներում: Իսկ այս ամենի իրական զավեշտն այն է, որ Հայաստանն այս կազմակերպության լիարժեք անդամն է, որի խարտիան հռչակում է անդամ երկրների հավասար և լիարժեք օժանդակումը: 86%՝ Վրաստան, 7%՝ Հայաստան. ա՜յ քեզ հավասարություն:

Մոռացված մարքսիստը և ենթակառուցվածքների քաղաքակրթությունները: Ներկայացնենք ևս մեկ հետաքրքիր գիտնականի: Գերմանացի մարքսիստ, հետագայում՝ հակամարքսիստ, պատմաբան և սոցիոլոգ Կարլ Վիտֆոգելին (*Karl Wittfogel*, 1896-1988): Ուսումնասիրելով Չինաստանի տնտեսության զարգացման պատմությունը, խորացնելով Կ.Մարքսի արտադրության ասիական կերպի մասին դրույթը՝ Վիտֆոգելը ներմուծեց «հիդրավլիկ քաղաքակրթություններ» հասկացությունը՝ ընդգծելով, թե ինչ հիմնարար դեր են խաղում ոռոգման ու ջրամատակարարման համակարգերի կառուցումն ու դրանց սպասարկումը, ջրի բաշխման սոցիալական և իրավական կանոնակարգման մեխանիզմները մի շարք ասիական քաղաքակրթությունների, առաջին հերթին՝ Չինական Աշխարհի ձևավորման գործում: Նա ընդլայնեց «հիդ-

բավլիկ քաղաքակրթություն» հասկացությունը մինչև «արևելյան բռնապետություն» և դեռ անցած դարի ուշ 20-ականներին հստակորեն նշում էր ասիական բռնապետության և հիդրավլիկ քաղաքակրթությանը բնորոշ մի շարք էական տարրերի առկայությունը Ռուսատան/ԽՍՀՄ-ում [13]: Հետագայում Վիտֆոգելը հստակ մատնանշեց Մարքսի «զանցանքն» իր տնտեսական և քաղաքական ֆորմացիաների հայտնի սխեմայում արտադրության ասիական կերպը որպես առանձին ֆորմացիա չներառելու ուղղությամբ: Բացի այդ, նա «արևմուտքին» ցույց տվեց Ասիայում Ստալինին հաղթելու և ԱՄՆ-ի համար իրական մղձավանջ հանդիսացող «Սինո-Սովետական» աշխարհաքաղաքական բլոկը քայքայելու ճանապարհը[1]:

Այսպիսով, Վիտֆոգելը քաղաքակրթությունների դասակարգման և ուսումնասիրման հիմքում դնում էր տնտեսական ենթակառուցվածքների, այս պարագայում՝ ոռոգման համակարգերի ձևավորումը: Այսպիսի մոտեցումն արդի աշխարհաքաղաքական կամ պատմական մտքի շատ խոստումնալից ուղղություն կարող էր դառնալ, առավել ևս, որ նորագույն ժամանակները մեզ տվեցին աշխարհաքաղաքական գործընթացներում էներգա-տրանսպորտային ենթակառուցվածքների կարևոր դերի չափազանց վառ օրինակներ՝ երկաթուղային ցանցի զարգացումը և ԱՄՆ կենտրոնացված պետության ձևավորումը, ածխաջրատների տրանսպորտի ուղիների (ցամաքային և ծովային) դերը XX դարի աշխարհաքաղաքական պատմության մեջ և այլն: Այո, կարող էին դառնալ և հաջողությամբ մրցել, օրինակ, Ս.Հանթինգթոնի մոտեցումների հետ, եթե միայն Վիտֆոգելի աշխատությունները հիմնավոր կերպով մոռացության չմատնվեին:

Հակառակ դեպքում մեզ ամենևին էլ զարմանալի չէին թվա, օրինակ, վրաց-ռուսական հարաբերությունների զարգացման «առանձնահատկությունները» հետխորհրդային փուլում: Իրոք, XX դարի սկզբին Ռուսական կայսրության հոգեվարքի ժամանակ և XX դարի վերջին՝ ԽՍՀՄ փլուզման և դրան հաջորդած ժամանակ մեր տարածաշրջանում ընթացող գործընթացներին բնորոշ է զարմանալի սիմետրիա: Այդ սիմետրիայի յուրօրինակ առանցք են հանդիսանում տարածաշրջանում էներգատրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման ծրագրերը: Այսպես, դեռ 1918-19 թվականներին Վրաստանի նորանկախ հանրապետությունը արագորեն դարձավ թուրք-գերմանական ուժերի պատանդ՝ վիժեցնելով (մուսավաթականների հետ միասին) ոչ միայն Կովկասի տնտեսական ու քաղաքական միասնության փխրուն և չափազանց խոցելի գործընթացը, այլև մերկացնելով Կովկասյան ճակատը Թուրք զավթիչ-

[1] *Karl Wittfogel,* The Ruling Bureaucracy of Oriental Despotism: A Phenomenon That Paralyzed Marx. *The Review of Politics*, Vol. 15, No. 3 (Jul., 1953), pp. 350-359: Karl Wittfogel, How to Checkmate Stalin in Asia: *An American Policy Geared to Chinese Realities.* October 1950. Վիտֆոգելի դրույթներից շատերն ուղակիորեն կամ միջնորդված կերպով օգտագործվեցին ԱՄՆ ռազմավարության իրականացման ընթացքում՝ կոմունիզմի սանձումից մինչև հակակոմունիստական խաչակրաց արշավանք, ԱՄՆ նախագահներ Էյզենհաուերի, Նիքսոնի և Ռեյգանի օրոք:

ների համար ու հրավիրելով գերմանական օկուպացիոն ռազմուժը Բաքու-Բաթում էներգատրանսպորտային «միջանցքը» վերահսկելու և սպասարկելու համար: Դեռ այն ժամանակ Վրաստանը հեգնանքով անվանվում էր *«Грузинская Нефтепроводная Республика»* [14, с. XXVI]:

Ապշեցուցիչ ճշգրտությամբ պատմությունը կրկնվեց ԽՍՀՄ փլզումից հետո և 90-ականների վերջերին: Ուղղակի հիմա գերմանական օկուպացիոն ռազմուժին փոխարինելու է գալիս ՆԱՏՕ անդամակցության հանդեպ Վրաստանի մոլուցքը, Բաքու–Բաթում էներգատրանսպորտային «միջանցքի» փոխարեն՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարերը, դե, իսկ *«Грузинская Нефтепроводная Республика»* անվանումը՝ բոլորովին չկորցնելով ակտուալությունը, պարզապես հարստացավ «սերվիսային երկիր» երանգով: Ե՛վ այն ժամանակ, և՛ հիմա այս ամենի աշխարհաքաղաքական հենքը նույնն է. մեկուսացնել Ռուսաստանը Կովկասից ու Միջին Արևելքից, խեղդամահ անել հայերին և Հայաստանը, արտաքսել մեզ տարածաշրջանային էներգատրանսպորտային ծրագրերի իրականացումից, հնարավորության դեպքում Կովկասում ունենալ միայն մեկ քրիստոնեական բուֆերային պետություն՝ ուղղափառ Վրաստան: Ուղղակի այն ժամանակ դա կայսերական Գերմանիայի գենշտաբի ռազմավարական ծրագիրն էր, հիմա՝ «Ալիևի դոկտրինը» (մանրամասն տե՛ս [15]): Եվ այժմ, նավթա- և գազատարներին միանալու է գալիս էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի տարածաշրջանային ցանցի զարգացումից Հայաստանի մեկուսացումը:

Իսկ արժե՞ արդյոք հիշեցնել այն դերի մասին, որն ունեցավ գերմանական կապիտալով և աշխարհաքաղաքականությամբ ծրագրված Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառուցման ծրագիրը մեր ազգի մեծագույն ողբերգության՝ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության և մեր ազգային օջախի կորստի գործում: Սա մարդկությանն ուղղված չարագույժ նախազգուշացում էր XX դարի արյունոտ պատմության մեջ էներգետիկ-տրանսպորտային ենթակառուցվածքների դերի մասին: Նախազգուշացում, որը, ցավոք, քչերը լսեցին:

Այսպիսով, մեր հանրապետության ազգային անվտանգության հրամայականն է ապաշրջափակել Հայաստանը: Ջանալ բացել մեզ շրջանցող-ճզմող աքցանները՝ ճիշտ այնպես, ինչպես դա կատարվեց 1914թ. Սարիղամիշի հայտնի մարտական գործողության ժամանակ [16], 1942թ. ձմռանը՝ Մոսկվայի տակ կամ բոլորովին վերջերս՝ Շուշիում և Լաչինում: Անցած երկու տասնամյակների ընթացքում Արևմուտքը ձախողվեց այս հարցում մեզ և Կովկասյան ողջ տարածաշրջանին ռազմավարական որևէ գործուն այլընտրանք առաջարկել: Դա տեղի ունեցավ այն բանի հետևանքով, որ Արևմուտքը ոգևորությամբ որդեգրեց և իրականացրեց իր հիմքում արատավոր և, վերջին հաշվով, անիրատես «Ալիևի դոկտրինը»: Հետևաբար, ռազմավարական, ռազմական և միջազգային տիրույթում Հայաստանի Հանրապետության անվտանգության

համակարգը պետք է շարունակի հենվել Ռուսաստանի Դաշնության հետ պայմանագրի և ՀԱՊԿ-ի վրա[1]:

Տարածաշրջանային համագործակցության նոր աքսիոմատիկան: 2008թ. օգոստոսից հետո Հարավային Կովկասն այլևս այն չէ, ինչ առաջ: Նոր իրադրությունը տարածաշրջանային էներգետիկ համագործակցության առումով Հայաստանի համար նոր հնարավորություններ պետք է բացի Թուրքիայի և Իրանի էլեկտրաէներգետիկ շուկաների համար մղվող տարածաշրջանային կատաղի մրցակցությունում ներգրավվելու և տարածաշրջանային ենթակառույցներից մեկուսացմանը վերջ տալու ուղղությամբ: Հայաստանին պարտադրված մեկուսացվածությունը տարածաշրջանում զավեշտալի էր դեռ մինչև 2008թ. օգոստոսը: Դե, իսկ 2008թ. օգոստոսից հետո այսօրինակ մոտեցումը պարզապես անընդունելի է[2]:

Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից, կարծում ենք, անհրաժեշտ է անհապաղ վերանայել վերը նշված *Ֆիխներ* ընկերության ուսումնասիրությունը և նմանատիպ այլ ուսումնասիրությունների արդյունքները և դրանց առաջարկները: Էլեկտրաէներգետիկ համակարգը ռազմավարական ենթակառուցվածքի (խողովակաշարեր, մայրուղիներ, ջրային տրանսպորտ, երկաթուղի) այն միակ բաղադրիչն է, որում Հայաստանը կարող է և պետք է զբաղեցնի առաջատար դիրք տարածաշրջանում: Դա բացատրվում է Հայաստանին բնորոշ հետևյալ առանձնահատկություններով:

Հայաստանն Անդրկովկասում միակ երկիրն է,

- որի աշխարհաքաղաքական շահերը միտված են տարածաշրջանային *ստատուս քվոյի* պահպանմանը, հետևաբար և տարածաշրջանային երկարաժամկետ կայունությանը և համագործակցությանը,
- որը համատեղում է ռազմավարական մակարդակի համագործակցությունը ՌԴ-ի հետ՝ միևնույն ժամանակ ունենալով գործուն հարաբերություններ Արևմուտքի և Իրանի հետ՝ ամենաբարձր մակարդակով,
- որը տասնամյակներ եղել է տարածաշրջանում էլեկտրաէներգիա արտահանող երկիր և որի գեներացնող հզորություններն ունեն ներդաշնակ եռակազմ բնույթ՝ հանածո վառելիք (բնական գազ), հիդրո- և ատոմային էներգիա,

[1] Ս.թ. օգոստոսին Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի Հայաստան պաշտոնական այցի ժամանակ հայտարարվեց ՀՀ-ում ՌԴ ռազմակայանների տեղակայման ժամկետի երկարացման (մինչև 2049թ.) և նրանց խնդիրների տիրույթի ընդլայնման հետ կապված պայմանագրերի ստորագրման մասին - *ծան. խմբ.:*

[2] 2010թ. սեպտեմբերի 29-ին հայտարարվեց Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի բարձրավոլտ ցանցերի համակցման, ինչպես նաև Վրաստանի վրայով Ադրբեջանից Թուրքիա էլեկտրաէներգիայի հոսքի կազմակերպման վերաբերյալ մտադրությունների մասին արձանագրության ստորագրման վերաբերյալ: Սրանով ամրապնդվում է տարածաշրջանում Հայաստանի ավելի ամբողջական մեկուսացումը՝ այս անգամ արդեն էլեկտրաէներգետիկ ենթակառուցվածքների զարգացման առումով - *ծան. խմբ.:*

- որը կարող է համատեղել իր բարձրավոլտ էլեկտրացանցը *միաժամանակ* և՛ Իրանի, և՛ Թուրքիայի, և՛ Վրաստանի, և՛ Ադրբեջանի, և՛ Նախիջևանի, և՛ Արցախի հետ: Եզակի մի հնարավորություն՝ հաջողությամբ ծավալելու այս տարածաշրջանում էլեկտրաէներգետիկ փոխհոսքերի կազմակերպումը, հավասարակշռումն ու տարածաշրջանային դիսպետչերացումը:

Այս դրույթներն անհրաժեշտ է դնել էլեկտրաէներգետիկ համակարգի տարածաշրջանային համագործակցությանը նվիրված յուրաքանչյուր նոր ուսումնասիրության հիմքում:

Ինչպիսի՞ն է իրականությունը. հայացք Հայաստանից

Այսօր՝ անորոշություններով լի գլոբալ փոփոխությունների «լուսանցքային» մեր ժամանակներում, մեր ազգային անվտանգության համակարգի համար, կարծում ենք, անհրաժեշտ է ամրագրել մի քանի բազիսային իրողություններ, որոնք և ուրվագծում են մեր տարածաշրջանում *իրականության* աշխարհաքաղաքական հենքը:

Առաջին. Բացառապես խաղաղ և օրինական կերպով արտահայտված Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի արտահայտմանն ի պատասխան՝ Ադրբեջանը դիմեց ագրեսիայի և կրեց ռազմական չոր պարտություն: Այս երկիրը կամ պետք է սանձազերծի նոր պատերազմ, կամ մշակի ինքնուրույն Լեռնային Ղարաբաղի հետ իր *modus vivendi*-ն: Ճիշտ այնպես, ինչպես դա ստիպված է անել Թուրքիան Իրաքի հյուսիսում գործող Քրդստանի տարածքային կառավարության հետ: Միջազգային հանրության քար լռության պարագայում Ադրբեջանի անընդմեջ ռազմատենչ հայտարարությունները, այս երկրում իշխանափոխության մեխանիզմների սաղմնային վիճակն ու դրանով պայմանավորված անորոշությունները լրջորեն վտանգում են Հարավային Կովկասի անվտանգությունն ու անդորրը: Վտանգված է Ադրբեջանի ներկայիս տարածքում գտնվող հայ մշակույթի կոթողների և ժառանգության բուն գոյությունը: Վտանգված են Ադրբեջանի հայազգի քաղաքացիների կյանքն ու ավտանգությունը:

Երկրորդ. Թուրքիան, 1993թ. փակելով սահմանը Հայաստանի հետ, Հայաստանի Հանրապետության նկատմամբ դիմեց ռազմական գործողության և, հետևաբար, զրկեց իրեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում միջնորդ հանդիսանալու որևէ հիմքից: Գոնե, և մինչև այն պահը, երբ նորից կբացի Հայաստանի հետ իր սահմանը՝ առանց 3-րդ կողմերի խնդիրների հետ որևէ արծարծման: Բացի այդ, Թուրքիան կանգնած է ինքնու-

թյան խոր ճգնաժամի առջև և տարածքային չկարգավորված վեճեր ունի իր սահմանների գրեթե ողջ պարագծով՝ Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի և Իրաքի հետ: Տարածքային վեճը Հայաստանի հետ կարգավորված չէ, բայց նաև ակտիվ չէ: Թուրքիան եռանդուն շարունակում է մերժել հայերի հայրենազրկող ցեղասպանության կազմակերպման և իրականացման իրողությունը: Այսպիսի դիրքորոշումը մեր ողջ տարածաշրջանը զրկում է զարգացման ռազմավարական հեռանկարից: Վտանգված են Թուրքիայի ներկայիս տարածքում գտնվող հայ մշակույթի կոթողների և ժառանգության գոյությունն ու պատշաճ պահպանումը: Վտանգված են Թուրքիայի հայազգի քաղաքացիների կյանքն ու անվտանգությունը:

Երրորդ. Վրաստանը հիմնովին ձախողվեց իր հետխորհրդային սահմանների ներսում ազգային համաձայնության քաղաքականություն մշակելու և վարելու գործում: 2008թ. ամռանը դիմելով ռազմական արկածախնդրության՝ այն վտանգեց ողջ տարածաշրջանի անդորրն ու կայունությունը և ուղղակիորեն կանգնեց սեփական տարածքային ամբողջականության պահպանման հարցի առջև: Ըստ էության, Վրաստանն օժանդակում է տարածաշրջանում Հայաստանի շրջափակմանը և ենթակառուցվածքների զարգացումից մեր հանրապետության մեկուսացմանը: Վտանգված են Վրաստանի ներկայիս տարածքում գտնվող հայ մշակույթի կոթողների և ժառանգության գոյությունն ու պատշաճ պահպանումը, իսկ Վրաստանի հայազգի քաղաքացիները ենթարկվում են խտրականությունների:

Չորրորդ. Իրանի մեկուսացումը տարածաշրջանային զարգացումներից հանգեցնում է նրան, որ տարածաշրջանը զարգանում է տձև, դեֆորմացված: Ռուսաստան–Հայաստան–Իրան տնտեսական, էներգետիկ, մշակութային, քաղաքական և աշխարհաքաղաքական համագործակցությունը մեր տարածաշրջանը կայունացնող ու հավասարակշռող արդյունավետ ռազմավարական գործոն է: Այն կարող է ընդլայնվել և ներառել Ռուսաստան-Հայաստան-Թուրքիա համագործակցության բաղադրիչը, որը կլրացնի Թուրքիա-Իրան համագործակցության անխուսափելի զարգացումը:

Եվ վերջին. Այս ամենին Գերմանիան կարող է բերել իր էական սատարումն ու օժանդակումը: Մեզ համար ԵՄ ամենաուժեղ տերության, Թուրքիայի վաղեմի բարեկամ, ԵՄ-ում Վրաստանի կուրատոր Գերմանիայի Դաշնային Հանրապետության վերադարձը Կովկաս, հասկանալի է, ողջունելի է և օգտակար միայն մեկ պարագայում: Այն չպետք է սատարի Կովկասի ներկայիս պառակտմանը, Հայաստանը տարածաշրջանային էներգետիկ և տնտեսական ծրագրերից արտաքսելուն, այլ պետք է օժանդակի Հայաստանի, Իրանի և ՌԴ տարածաշրջանային լիարժեք ինտեգրմանը՝ առանց մեզ խեղդամահ անելու կամ մեր «ձեռքերը ոլորելու» սպառնալիքի:

Հոդվածս կցանկանայի ավարտել Ջոն Նայսբիթի «Մեգաթրենդներից» ևս մեկ մեջբերումով ([17], c. 356, թարգմանությունը մերն է– *Ա.Մ.).* «Ահա այսպիսին են մեր «փակագծային ժամանակները»: Ընդհանրապես, երկու դարաշրջանների միջև ընկած այս ժամանակն անորոշության ժամանակ է: Սակայն և սքանչելի ժամանակ, լի բազում հնարավորություններով: Եթե ընտելանաք այս անորոշություններին, ապա շատ բանի կհասնեք: Շատ ավելիին, քան դա հնարավոր է կայունության ժամանակներում, երբ ամեն ինչ ունի իր անունն ու տեղը, և գրեթե ոչինչ չի կարելի փոխել կամ շարժել տեղից: Հակառակ դրան, *բուռն փոփոխությունների մեր ժամանակներում* կարելի է ուղղակի հրաշքներ գործել: Բայց, միայն եթե ունեք ջինջ հայացք, հստակ պատկերացում և լավ եք տեսնում առջևում բացվող ճանապարհը:

Օ, ինչ հրաշալի ժամանակներում ենք մենք ապրում»:

Դեկտեմբեր, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն[1]

1. *Anthropologie in pragmatischer Hinsicht* abgefasst von Immanuel Kant. Konigsberg: Friedrich Nicolovius, 1798 (*И. Кант, Антропология с прагматической точки зрения,* пер. Н.М. Соколова, 1900. Բերվում է ըստ՝ *И. Кант,* Сочинение в шести томах, М., “Мысль”, 1966. т. 6).
2. *Դերենիկ Դեմիրճյան,* Հայը, Հայաստանի անկախության փոխառություն միօրյա թերթ, Թիֆլիս, 1920թ. օգոստոսի 2:
3. *Konrad Lorenz,* Die acht todsünden der zivilisierten Menschheit. Piper Co. Verlag, München, 1973. (*Восемь смертных грехов цивилизованного человечества*. В кн. *Конрад Лоренц*, Оборотная сторона зеркала, “Республика”, М., 1998).
4. *Werner Sombart, Die Juden und das Wirtschaftsleben.* Leipzig: Duncker 1911 (*Вернер Зомбарт,* Евреи и хозяйственная жизнь, СП(б). Книгоиздательство «Разум», 1912. Հաջորդ ռուսերեն հրատարակումը՝ միայն 2004թ.: *В. Зомбарт, Буржуа. Евреи и хозяйственная жизнь,* М., “Айрис Пресс”, 2004. Անգլերեն առաջին հրատարակումը՝ 1913թ., վերահրատարակումը միայն 2001թ.՝ *W. Sombart,* The Jews and Modern Capitalism. Batoche Books Limtied, Kitchener, Ontario, 2001).
5. *Max Weber, Die protestantische Ethik und der Geist des Kapitalismus*. Gesammelte Aufsätze zur Religionssoziologie, Band 1. Tübingen, Mohr, 1920. (Работы М. Вебера по социологии, религии и культуре, АН СССР, ИНИОН, М., 1991, Вып. 1-2).
6. Вильнюсская Декларация Парламентской Ассамблеи ОБСЕ и Резолюции 18-ой Ежегодной Сессии, Вильнюс, 29 июня – 3 июля, 2009г.
7. *Г.Дельбрук, М.Вебер, М. граф Монжела, А.Мендельсон-Бартольди,* Замечание к докладу Комиссии союзников и ассоциированных стран ответственности за начало вийны. Меморандум Версальской комиссии по вопросу о виновности в войне (գերմաներեն բնագրի տպագրման օրը նշված չէ, ցիտվում է ըստ՝ *М.Вебер,* О России. М., Росспэн, 2007).

[1] Բերում ենք բնագիր աշխատանքների և դրանց թարգմանությունների (գոյության դեպքում) առաջին հրատարակումները:

8. The Atlas of the Real World: Mapping the Way we Live. D. Dorling, M. Newman, A. Barford. Thames and Hudson, 2008.
9. *Halford J. Mackinder,* The Geographical Pivot of History. *The Geographical Journal*, Vol. XXIII, No. 4, April 1904, pp. 421-437.
10. *Nicholas J. Spykman,* The Geography of the Peace. New York: Harcourt Brace, 1944.
11. *Zbigniew Brzezinski,* The Grand Chessboard: American Primacy and its Geostrategic Imperatives. New York: Basic Books, 1997 (*З. Бжезинский,* Великая Шахматная Доска, М., "Международные отношения", 1998. с. 150).
12. Fichtner Caucasus 2007. Regional Power Transmission Extension Plan for Caucasus. Final Report. KfW Bankengruppe / Fichtner. Nov. 2007.
13. *Карл Виттфогель,* Геополитика, географический материализм и марксизм. *Под знаменем Марксисзма.* 1929, No. 2-3, 6-8, գերմաներեն բնագրի հրատարակման տարեթիվը հայտնի չէ:
14. *Дэвенпорт Е.Г, Кук С.Р.,* Нефтяные тресты и англо-американские отношения, М., "Военный вестник", 1925, с. XXVI.
15. *Մարջանյան Ա.,* ՌԵՆԴ կորպորացիան և մենք. Հայաստան-Թուրքիա հարաբերությունները, «Նորավանք» ԳԿՀ, «21-րդ ԴԱՐ», #3, 2010:
16. *Корсун Н.Г.,* Сарыкамышская операция, М.: Воениздат, НКО СССР, 1937.
17. *John Naisbitt,* Megatrends: Ten New Directions Transforming Our Lives, Warner Books, 1982 (*Джон Нейсбит,* Мегатренды, М, "АСТ", 2003).

НАЦИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ В ЭПОХУ ГЛОБАЛЬНЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ

Ара Марджанян

Резюме

В статье рассмотрен широкий спектр вызовов и задач, стоящих перед нашей системой национальной безопасности в эпоху глобальных геополитических изменений: от необходимости четкого осознания патологических явлений в современном обществе (в терминологии К.Лоренца) до проведения развернутой переводческой и издательской деятельности с целью выправления «индоктринационных ран», нанесенных всему национальному армяноязычному полю знаний за последние сто лет. В контексте попыток геополитической изоляции Армении от проектов по развитию региональной энерго-транспортной инфраструктуры и в условиях новых геополитических реалий, сложившихся на Южном Кавказе после военной авантюры Грузии в августе 2008г. и признания Россией независимости Южной Осетии и Абхазии, в статье сформулирована новая «аксиоматика» региональной интеграции Армении в сфере электроэнергетики.